

10170

---

10171

---

10172

---

10173

---

10174

---

891.99

H-65

1002

M-5002

1725 La Chaux-de-Fonds

1726 Hartungstr 46

1002 982-9000

947 *Furciferus* var. *luteus*  
n-guine-Philippines

~~1727~~ 2020 in Choro

891.99  
P. 947

10173




Մ. ՀՈՒՆԿ

ԲԱՐԵՎԱԶՈՂ ԱՅՏՈՒ ՆԵՐՔԵՒ  
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ



Կ. ՊՈԼԻՍ

1920



Տպագրութիւն  
Կ. ՔԵՇԵՇԵԱՆ ՈՐԴԻ

10040

1862  
47



# ԲԱՐԵՅԱԶՈՂ ԱՍԴԻ ՆԵՐՔԵՒ

ՈՒՂԵԽՈՐՈԽԻՒԹԻՒՆ ՄԲ.



Ա.



Եթէ երբէք դուք ալ բազում անգամ-  
ներ ուղեւորած էք՝ արդեօք փորձա՞ծ էք  
ինձ պէս թէ կայ ճամբորդութիւն, որու պատ-  
րաստութեանց սկսելու օրերնէս իսկ և որու  
ամբողջ տեւողութեան միջոցին՝ սրտնեղու-  
թիւններ, անհաճոյ գէպքեր, գժուարու-  
թիւններ անպակաս կը լինին, թէ ընդհակա-  
ռակն կայ ևս ուղեւորութիւն, որու սկիզբէն  
մինչ ի վախճան բարի պարիկ մը մեզ հոգա-  
ծու կը լինի կարծես. ամէն ինչ յաջող  
կ'ընթանայ, ամէն ինչ մեզ կը ժպտի.  
զուարձութիւններ, վայելքներ, հաճելի ա-  
նակնկալներ իրարու կը յաջորդին:

Չեր թոյլտուութիւնը կը խնդրեմ պատ-  
մելու համար ուղեւորութիւններէս մին՝ որ  
մասնաւորապէս բեղմնաւոր եղաւ ինձ պար-  
գեւած հաճոյքներուն մասին. աւելի ճիշդ  
խօսելով՝ այդ ուղեւորութեան մէկ գրուագը  
միայն, զի ծայրէ ի ծայր զայն պատմել՝  
ստուար հատոր մը ի գիր առնել պիտի նշա-  
նակէր:

1896 տիրահաչակ թուականէն ի վեր եգիպտոս գաղթած և Գահիրէ հաստատուած՝ վատառողջութեանս պատճառաւ 1907է սկըսեալ Աղեքասնդրիս փոխադրած էի բնակութիւնս, Բամէի գեղածիծազ գիւղերէն միոյն մէջ :

Տան բժիշկ մ'ունէինք, որու ի հարկին մեղ նուիրած խնամքներն այնքան յաջողութեամբ կը պսակուէին որ չափազանց կը յարգէինք ու կը սիրէինք զինք. ինք ևս մեծ համակութիւն կը տածէր մեղ նկատմամբ և մեր մտերիմներէն մին եղած էր :

Սրդ, երբ ի թուրքիս Սահմանադրութեան հռչակման յաջորդող տարւոյն, 1909ի գարունը թեւակոխեցինք, օր մը Տօքթ. Անավաթի յայտարարեց թէ նոյն ամառ օդափոխութիւն մ'ընել օգտակար պիտի լինէր ինձ :

— Ընտիր խորհուրդ, տօքթէօր, բացագանցեցի. տասներեք տարիներէ հետէ ծնընդգամյու չեմ տեսած. Պոլիս կ'երթամ մէկ քանի ամիսներ անցընելու. արենակիցներ, ազգականներ, բարեկամներ ունիմ, զորս կրկին տեսնել այնքան կը փափաքիմ:

Իւր հաւանութեան մասին անկասկած էի, բայց նա իմ խանդավառութիւնս մեղմեց հետեւեալ լրջամիտ խորհրդածութեամբ :

— Բարեկամս, ես ձեզ համակարծիք չեմ. լաւագոյն պիտի լինէր որ, ինչպէս համիտեան շրջանին ներքե. կ'ընէիք, դարձ-

եալ Վարնա ուղեւորէիք. դուք հանդիսաի, ըստ կամս, ազատ, անկաշկանդ պայտաներու, լիուլի գեղջկական կեանք մը վարելու պէտք ունիք. եթէ Պոլիս երթաք՝ հոն ազգականներ ու բարեկամներ զձեզ պիտի շրջապատեն. անոնց հանդէպ պէս պէս պարտականութեանց պիտի հարկադրութիք. կամայ ակամայ այցելութիւններու, ճաշի հրաւերներու, զանազան մեծարանքներու պիտի ենթարկութիք. ո՛չ, սիրելիս, մտիկ ըրէք ինձ, կրկին Վարնա գացէք և արձակ, համարձակ, անկախ կեանք մը վարեցէք :

Խոհեմութիւնը կը պահանջէր որ իւր իրաւացի դիտողութեանց առաջ տեղի տայի եւ, ուղեւորութեան պատրաստութիւններու տեսնելով, Յունիս 18ին րումանական Տաջիս շողեննաւը կ'առնէի Քէօպթէնձէի համար, ուրկից Վարնա պիտի անցնէի :

Հաղիւ շոգեննաւ մտած էի՝ պայուսակներով և իւր տիկնոջ հետ ընկերացեալ հասաւ Գահիրէցի իմ. ազնուադոյն բարեկամներէս մին, Տիար Ա. Պալեան, եղիպատական հեռագրական վարչութեան հինաւորք պաշտօնեաներէ մին, ներհուն անձնաւորութիւն մը, որու անունը շատեր կը ճանչեն անշուշտ ի Պոլիս. ընտիր հրապարակագիր. տարիներ առաջ ժողովուրդ հանդէսը հրատարակած է և այժմ իւր իմաստալից յօդուածները Յուսաքերի մէջ աչքառու են :

— Ի Պոլիս անշուշտ, ըսի իրենց, սովորական ողջոններէ վերդ :

— Ո՞չ, Քէօսթէնձէ կ'երթանք :

— Զէի կարծեր որ ինձ պէս յիմարներ ևս գտնուէին՝ Պօլիսը թողելու և Քէօսթէնձէ երթալու համար :

Յայնժամ Տիար Պալեան բացատրեց թէ երկար տարիներէ հետէ Քէօսթէնձէ հաստատեալ եղբայր մ'ունէր, թէ շուրջ քառորդ դար մը կար որ զիրար չէին տեսած, թէ երկուքն ալ ամուսնացած, զաւակներ հասուցած էին և իրարու ընտանիք չէին ճանչեր տակաւին :

Աւելորդ է ըսել թէ որքան գոհ էի այսքան մտերիմ և ըսմիբուն բարեկամի մը և իւր չնորհագեղ տիկնոջ ընկերակցութեամբ ուղեւորելուս. այդ առաջին օրը մանաւանդ՝ չզիտցանք ժամերն ինչպէս սահեցան, մինչեւ որ հանգստանալու համար ա'լ մեր խցիկ-ները քաշուիլ պարտաւորեցանք :

Հետեւեալ առաւօտ՝ հազիւ անկողնէ ելած՝ արդուզարդս կ'ընէի, երբ դուռս բադր խեցին :

Շոգենաւին սեղանապետն էր, Գօսթան, զուարթ մարդուկ մը, որու համակրելի դէմքըն ուշագրութիւնս գրաւած էր, երբ հասնելուս՝ դոյքերս խցիկս փոխագրել տալու զբաղած էր :

Ափսէով գաւաթ մը սուրձ կար իւր ձեռքը :

— Պարո՞ն, ըսաւ ինձ մեծարալից շեշտով մը, համարձակութիւնս առի ձեռօքս

թրքական սուրձ մը պատրաստել և ձեզ բերելու. յիրաւի քիչ մը վերջ սեղանատուն իջնելով՝ ամէն ինչ պիտի գտնէք. բայց մեղ, արեւելցոցս համար, անկողնէ ելնելնուս իսկ, թրքական սուրձ մը կարծես անհրաժեշտ է, այնպէս չէ :

Սոյն բացառիկ վերաբերումն անշուշտ զարմանք պատճառեց ինձ. մեծ կարեւորութիւն մը չընծայեցի սակայն՝ լաւ պարզեւի մը ակնկալութեան վերագրելով սոյն վարժունքը :

— Արդարեւ, պատասխանեցի, ասկից աւելի հաճելի բան մը չէիք կրնար մտածել ինձ համար. ճշդովին ես ալ այդ սովորովին ունիմ. նստեցէք, տեսնեմ, որպէս զի քօնեաք մը և շաքարեղէն ձեզ հրամցնեմ:

Թիչ վերջ սեղանատուն իջայ նախաձաշելու համար. երկորդ նաւապետը հոներ. իմ ողջոյնս մասնաւոր ուշագրութեամբ մը և բարեկամական ժպիտով մ'ընդունեց, և զիս հրաւիրելով իւր քով բազմելու.

— Սիրելի պարո՞ն, ըսաւ ինձ, զիշերը հանգիստ անցուցի՞ք, գո՞հ էք ձեզ եղած սպասարկութենէն. եթէ ուեէ դժգուութիւն մ'ունիք՝ ինչը յայտնեցէք ինձ. մեծագոյն փափաքս է ամէն հանգստաւէտութիւն ընծայել ձեզ մեր շոգենաւին վրայ:

Սոյն փաղաքշալից խօսքերուն չէի սպասեր երբէք, արտասալոր արժանիք մը չու-

նէի բնաւ՝ նաւապետին սոյն հոգածութեան առարկան լինելու համար :

Մէկ քանի բառերով չնորհակալիք յայտնեցի իւր աղնուութեան համար և յարեցի թէ ամէն մասամբ զոհ և հանդիսաւ էր :

Դութայի և նաւապետին սոյն պատուասիրութիւններն , այսպէս իրարու յաջորդելով , զիս ապշեցնելու բնութիւնն ունէին . շարժառիթը գտնելու համար անդադար կը չարչարէի միտքս . վերջ ի վերջոյ լոյս մը ծագեցաւ հոն յամնկարծ :

Սոյն հրաշքն ապահովապէս իմ այցաքարտս գործած լինելու էր . կանուխէն խրցիկս բռնելու համար՝ շոգենաւային ընկերութեան զրկած էի զայն . աւասիկ ինչ որ նշանակուած էր անոր վրայ :

M. HOUNG  
Représentant de journaux étrangers

Le Caire

Représentant -ներկայացուցիչ - բառը կամ անուշադրութեամբ Correspondant - թղթակից - կարդացած , կամ այնպէս մեկնած և , ըստ այսմ , հաղորդած լինելու էին

շոգենաւին պաշտօնէութեան թէ ուղեւորաց շարքին մէջ թերթի թղթակից մը պիտի գտնուէր :

Ասկից տարբեր բացատրութիւն մը գըտնել կարելի չէր :

Սոյն սիսալ մեկնութեան հետեւանօք՝ ամբողջ ուղեւորութեան միջոցին ինձ չուայլուած պատիւները նկարագրել երկար կը լինէր և թերեւս իսկ անսեղի անձնագովութիւն մը պիտի նկատուէր . միջադէպ մը միայն պատմելով պիտի բաւականանամ:

Ամէն անոնք , որ ըումանական շոգենաւով Քէօսոթէնձէ գացած են , կը յիշեն անշուշտ թէ շոգենաւին Պօլսէ բաժնուելէն վերջ , բռմանիացի պաշտօնատար մը կ'սկսի ուղեւորներուն անցագրերն ու գոյքերը քննել . Քէօսոթէնձէ կատարուելիք մաքսային գործողութիւններն են որ այսպէսով ճամբան ի գործ կը դրուին , որպէս զի հան շոգենաւին գալուսեան սպասող կառախումբերը կարենան մեկնիլ առանց ժամանակի կորստեան :

Երբ մեր շոգենաւը Պօլսէ բաժնուեցաւ՝ ամէնուն խօսակցութեան նիւթն էր թէ գոյքերու քննութիւնը խստիւ տեղի կ'ունենար և թէ նոր առարկաներ չէին կրնար ճողոպրիւ ծանրածանր մաքսատուրքերէ :

Այս բանն ինձ մտահոգութիւն կը պատճառէր . յանկարծ մտարերեցի ինձ վերագրուած տիտղոսն օգտագործել . ուղղակի նաւապետը գտնուէ գացի :

— Նաւապետա իմ, ըստ իրեն, ամէն կողմէ կը լսեմ թէ ձեր երկրին մաքսային տրամադրութիւնք կարի ծանր են, թէ գոյքերու մէջ գանուած ամէն նոր առարկայ մաքսատուրքի կ'ենթարկուի անինայ. արդ, իմ վիճակիս բերմամբ, մասնաւորապէս խնամել պարտիմ իմ հագուստ կապուստ և կը մակաբերէք թէ՝ այսպէսով պայուսակներուս մէջ աննշան թուով առարկաներ միայն պիտի կրնան պրծիլ մաքսային տեսուչին ճանեկրէն :

— Սիրելի՛դ իմ, պատասխանեց ժըպտելով, թո՛ղ ատիկա ձեր մտահոգութեանց ամենայետինը լինի. երբ տեսուչը ձեր խըցիկն այցելէ ես իրեն պիտի ընկերանամ:

Քիչ վերջ պաշտօնատարը կը ձեռնարկէր իւր քննութեանց. այսպէս պատահեցաւ որ Պալեաններու կարգն ինձմէ առաջ գայ և Տիկ. Պալեան կոչուեցաւ:

Ամուսնոյն հետ մնացած էինք, որ այսպիսի հոգեր իւր կնոջ թողելու սովոր էր. զարմացանք տեսնելով որ հաղիւ գացած տիկինը վերադարձաւ. վերջին ծայր յուղեալ և միանդամայն զայրացեալ էր:

— Սարսափելի՛, սարսափելի՛, կը մըրմըռար ջղագրգռեալ:

Անհամբեր կ'սպասէինք որ խօսի. սկսաւ պատմել. խցիկը մանելուն՝ պաշտօնատարը, պայուսակներէն մին ցոյց տալով, խնդրած էր որ բանայ զայն. երեսը դրուած զոյգ մը մուճակ, չքեղօրէն ասեղնագործեալ.

Ճեռքն առած և մէկ կողմ դրած էր՝ մաքսատուրքի ենթարկելու ակներեւ շարժուածեւով մը:

— Ներեցէ՛ք, պարո՞ն, ինչո՞ւ զանոնք մէկ կողմ կը դնէք:

— Բարէ՛, որովհետեւ առւրքի պիտի ենթարկուին:

— Ինչպէ՞ս, մաքսատուրքի ենթարկել զոյգ մը մուճակ՝ որ նուէր արուելու սահմանեալ է:

— Թոյլ տուէ՛ք, տիկի՞ն, որ ձեզ հարցում մ'ուղղեմ, յարած էր տեսուչը թիթե սրանեղութեամբ մը. դուք պիտի մնա՞ք ի թէօսթէնձէ թէ շուկեկառք պիտի առնէք:

— Քէօսթէնձէ պիտի մնանք:

— Հրաշալի՛, շարունակած էր, մուճակները կրկին իրենց տեղը զետեղելով, զոցեցէք պայուսակը՝ քանի որ առաջին առարկայէն իսկ այսպէս խնդիր կը յարուցանէք. ձեր գոյքերը մաքսատան մէջ պիտի քննուին. յարգանքներս, տիկի՞ն:

Եւ խոնարհութիւն մ'ընելով՝ խոկոյն դուրս ելած էր խցիկէն:

Սայն նկարագրութիւնն ընելէ վերջ, խօսքն ինձ ուղղելով՝

— Տեսնենք թէ դո՛ւք ինչ պիտի ընէք, սիրելի բարեկամ:

— Ես, տիկի՞ն, իմ բարի աստղիս կ'ապաւինիմ. հակառակ պարագային, եթէ ի գերևս ելնեմ, ձեզ վիճակակից լինելու համար

պիտի խնդրեմ որ իմ գոյքերս ալ մաքսա-  
տան մէջ աչքէ անցուին :

Հազիւ սոյն խօսքերը փոխանակուած  
էին՝ եկան կոչել զիս :

Փութացի գէպի խցիկս և ահա ներս  
մտան պաշտօնատարը, նաւապետն և նա-  
ւաստի մը, որ սոսինձով լի անօթ մը և  
պիտակներու ծրար մ'ունէր ի ձեռին՝ քննու-  
թենէ վերջ պայուսակներուն վրայ փակցնե-  
լու համար :

Նաւապետն ապահովիչ ակնարկ մ'ուղ-  
ղեց ինձ :

Պաշտօնատարը պայուսակներէս մին  
ցոյց տալով՝

— Ներեցէք, պարո՞ն, բսաւ, կը հաճի՞ք  
սոյն պայուսակը բանալ :

— Ամենայն սիրով, պարո՞ն, պատաս-  
խանեցի :

Եւ բանալիներու տրցակս ի ձեռին խո-  
նարհեցայ. բայց դեռ բանալին չէի զետե-  
զած:

— Օ՛հ, պարո՞ն, յոզնութիւնը չարժիր :

Յետոյ նաւաստիին հրամայեց պիտակը  
փակցնել նոյն պայուսակին վրայ :

— Եւ այժմ, չարունակեց, կ'ուղէ՞ք սա  
միւս պայուսակը բանալ :

Նոյն պատրաստակամութիւնն իմ կող-  
մանէ, նոյն ընդդիմութիւնն իւր կողմանէ,  
նոյն հրամանը պիտակին փակուցման հա-  
մար :

Միեւնոյն բանը տեղի ունեցաւ երրորդ  
պայուսակիս համար. պէտք էր որ ձեւակեր-  
պութիւնն ի գործ դրուէր անպայման :

Այսպէս, չնորիւ այցաքարտիս, բոլոր  
գոյքերս աչքէ անցուած եղան՝ առանց որ  
նոյն իսկ բացուէին :

Նաւապետին նախապէս ինձ տղղած  
ապահովիչ ակնարկը փոխարինեցի այժմ  
չնորհակալութեան ակնարկով մը :

Երբ Տէր և Տիկին Պալեանի մօտ վերա-  
դարձայ՝ յաղթական կերպարանք մ'ունէի.  
տիկինն, որ հաստատապէս համոզուած էր  
թէ իրեն հանդիպած փորձանքն ինձ ևս պիտի  
վիճակէր, արմացաւ զարմացաւ երբ յայտա-  
րաբեցի թէ, որպէս կը յուսայի, իմ բարի  
աստղս ձեռնառու եղած էր ինձ :

— Այս շոգենաւին վրայ ամէն բացա-  
ռիկ մեծարանք ձեզ կ'ուղղուին միայն, յա-  
րեց, իւր կնոջական անձնասիրութեան մէջ  
վիրաւորեալ :

Զյապաղեցայ կրկին երթալ գտնելու  
նաւապետն և, պատմելով ինչ որ տեղի  
ունեցած էր Տիկ. Պալեանի և պաշտօնա-  
տարին միջև, յաւելեցի թէ այդ ազգակից-  
ներուս շատ կը համարէի և թէ ճշմարիտ  
հաճոյք մը պիտի պատճառէր ինձ՝ եթէ ա-  
նոնց մասին բարեկիսէր տեսուչին մօտ :

Խնդրանքս սիրով կատարուեցաւ և քա-  
ռորդ ժամ չանցած՝ պիտակները կը փակ-  
ցուէին Պալեաններու ամբողջ պայուսակնե-  
րուն վրայ :

Միջօրէին բաժնուած էինք Պօլսէ . կէս զիշերը կը մօտէր և Քէօսթէնձէ կը հասնէինք :

Ժամանակ էր լիառատ պարգև մը տալու Գոսթայի որ, ի միջի այլ պատուափութեանց, ամէն առաւօտ թրքական սուրճով մեծարած էր զիս . ոսկեղբամ մը իւր ափին մէջ սահեցնելով հանդերձ՝ ըսի իրեն .

— Գոսթա՛, ձեր երկրին օթեւաններուն մասին շատ գէշ կը խօսին . ամէնուն մէջ սիրային առեւտուրներու անպատկառ տեսարաններ . կրնա՞ք ինձ յանձնարարել պատուաւոր և լուրջ օթեւան մը, պատշաճ իմ դիրքիս :

— Անոնք եղէք հիմա երբ հանինք՝ Օրէլ Ռիկալի (Արքայական Օթեւան) թարգմանը պիտի կոչեմ և ձեր գոյքերն անոր պիտի յանձնեմ . հո՞ն օթեւանեցէք . կարեւորութեան կարգաւ քաղաքին երրորդ կամ չորրորդ օթեւանն է և հո՞ն անպատշաճ բան մը չպիտի տեսնէք բնաւ . ընդհակառակն ձեր փափաքած հանդարտութիւնն ու հանդստաւէտութիւնը պիտի գտնէք :

Վերջապէս Տայիան քարտիին հպեցաւ . Պալեանի եղբայրն ամբողջ ընտանեօք կ'ըսպասէր . բարեկամն հապճեպով զիս ներկայացուց անոնց . Արքայական Օթեւանին հանրակառքը բազմեցայ . պանդոկին սեփհականատէրն անձամբ զիս ընդունեց . լաւագոյն սենեակներէն մին խալբեցի և անկողին մտայ հանդստանալու :

Բ.

Հետեւեալ առաւօտ, թեթև նախաճաշ մ'ընելէ վերջ, դուրս ելնել կը պատրաստուէի՝ երբ սենեկապան սպասուհին եկաւ իմաց տալ թէ երկու պարոններ հիւրասրանը կը գտնուէին և զիս տեսնել կ'ուղէին :

Անմիջապէս մակաբերեցի թէ բարեկամն Տիար Պալեան լինելու էր, որ իւր եղբօր հետ զիս պատուել մտածած էր :

Արդարեւ զիրէնք գտայ հիւրասրանին մէջ . Քէօսթէնձէի հայ գաղութին ամենէն նշանաւոր գէմքերէն մին է Տիար Կ. Պալեան, արմտեղէնի ընդարձակ գործառնութեան տէր . սիրալիր տեսակցութենէ մը վերջ՝ ստիպեց որ ի միասին գուրս ելնենք երժալու համար Պրիսթոլ Սրճարանն՝ ուր մեր ազգակիցներու ամենէն կարեւոր դասակարգն ամէն առաւօտ հաւաքուած կը լինէր . կ'ուղէր զմեզ անոնց հետ ծանօթացնել :

Ներկայացումը տեղի ունեցաւ և աւասիկ փութով մտերմական շրջանակ մը կազմեցինք :

Չեմ գիտեր հարկ կա՞յ շեշտելու թէ Քէօսթէնձէի հայ գաղութը կարի պատուալուր է մեզ համար . մեծաւ մասամբ զարգացեալ և առեւտրական ասպարէզի մէջ փայլուն գիրքերու տիրացած անձնաւորութիւններ :

Եւ ահա յանկարծ երկնից որոտումներ, տեղատրափ անձրեւ մը :

Ո՞վ կրնար մտքէ անցընել թէ Ռումանիա ամխներէ հետէ երաշտութենէ կը սառապէր և թէ այս բոլոր մեր նորաստաց բարեկամներն, իրէնց արմտեաց առեւտուրին բերմամբ, ուրախութեան բարձրագոչ ազաղակներով պիտի ընդունէին սոյն բարերար անձրեւը. միահամուռ մեր երկուքին գոչեցին :

— Այս որքա՞ն բարեկան է ձեր գալուստը. պէտք է այժմ իսկ արտասովոր խրախնանութիւն մը սարքենք ի պատիւ ձեզ :

Եւ սկսանք ցուիիափ. գաւաթներն ու խորտիկներու պնակներն իրարու յաջորդեցին մինչեւ ժամը մէկ յետ միջօրէի :

Թէև նախապէս մտադրած էի անմիջապէս անցնիլ Վարնա, բայց բարգաւաճ քաղաքի մը զուարձութիւններէն և իմասնուորի սոյն բարեկամաց հաճոյալից ընկերակցութենէն հրապուրուած՝ որոշեցի մէկ երկուշաբաթ միալ :

Գոսթայի յանձնարարած օթեւանէն շատ գոհ էի. բաժանորդագրութեան տեսքը մ'ալ առի Ռիարօնան ըլ Ֆորանս է, որու կերակուրները յոյժ ինսամերալ և համեղ էին :

Հազիւ մէկ քանի օրեր սահած էին. օր մը միջօրէի ճաշս առած, օթեւան վերադրածած, ըստ եգիպտական սովորութեան ցերեկի քուն մը քաշած և ապա արդուզարդու ըրած էի՝ դուքս ելնելու կազմ ու պատրաստ :

Այդ միջոցին դուռս բաղխուեցաւ և, թոյլտութեանս վրայ, սենեկապան սպասուհին ներս մանելով՝ այցաքարտ մը ներկայացուց ինձ :

— Պարո՞ն, քարտ մ'ունիք :

Փղոսկրագոյն պրիսթոլին վրայ վիմագրեալ անունն էր.

ՏԻԿ. ՀԱՐԻՒՐԱՊԵՏՈՒՅԻ ՆԻՆԱ ԹԷՏԷՍԴՈՒ

ՊԱՐԵՐԵ

1862

Եւ անսխալ ֆրանսերէնով մը յաւելցուած էր.

Ուաղաչէ զՃիար Հունկ որ հաճի փոքրիկ տեսակցութիւն մը չսորհել իրեն՝ Եգիպտոսի վերաբերեալ մի քանի կարեւոր տեղեկութիւններ ունենալով խնդրելիք :

— Ո՞վ է այս տիկինը, հարցուցի, հո՞սկ օթեւանի :

— Այո՛, պարո՞ն, նախընթաց օր հաստ Պուլքէչ. բայց ի՞նչպէս, չէ՞ք ձանչեր զինք:

— Ի՞նչպէս կ'ուզէք որ ձանչեմ:

— Սակայն ամէն մարդ, համայն աշխարհ կը ձանչէ զինք:

— իբրև ի՞նչ :  
— Բումանիոյ ամենագեղեցիկ կինն է ,  
պարո՞ն :

— Եորատի՞ է :

— Հաղիս երեսոն երեք տարեկան :

Մեծ էր ապշութիւնս . այսու հանդերձ  
անխոռվութիւնս պահեցի և հրամացեցի իրեն .

— Լաւ , օրի՞րդ , գացէք , ինչըեմ ,  
իմաց տալ թէ իրեն կ'սպասեմ :

Արդայական Օթեւանի մասին Գոսթայի  
ինձ շռայլած վստահութիւնները յօ՞գս ցըն-  
դելու սահմանեալ էին արդեօք . կը խոր-  
հէի սակայն թէ , որպէս ամէն քաղաքակիրթ  
երկրի մէջ , ի Բումա ևս զինուորական  
կարգ ու սարքն ամենախիստ լինելու էր և  
հարիւրապետի մը կինը չէր որ պիտի կարե-  
նար սիրային արկածի մը հետամուտ լինել  
նմանօրինակ պայմաններու մէջ :

Ժամանակը չէր սոյն վարկածներով որո-  
ճալու . Բումանիոյ ամենագեղեցիկ կինն ըն-  
դունելու պատրաստուելու էր :

Նրանցքին մէջ շնկոցներ՝ որպէս թէ  
դշխոյի մը գալուսան աւետող . ապա վերե-  
րեւում սենեկապան սպասուհիին՝ որ հապ-  
ճեպով ծանոյց .

— Կուգայ կոր , կուգայ կոր :

Եւ ահա շրջազգեստի ֆշրտիւն մը և  
փոքրիկ հարուած մը դուռիս :

Փութացի անձամբ բանալ . երբ ներս  
կը մտնէր՝ խնարհեցայ իւր առաջ և հաղիս  
կրցի մրմնջել .

— Բարի եկա՞ք , աիկին :

Հասուն և զգաստացեալ մարդ մը , որպէս  
եռ էի , յանկարծուստ երիտասարդական  
աւելնով չյուզուիր բնաւ . բայց պարագան  
արտակարդ էր :

Տիկին թէտէսգուի լուսապայծառ . գեր-  
ընական գեղեցկութիւնը զգիլիցուցիչ բան  
մ'ունէր . այնքա՞ն նրառթիւն , այնքա՞ն  
շնորհ կը փայլէր իւր վրայ որ մարդ չէր  
ուզեր հաւատալ թէ իսկապէս կնոջ մը յան-  
դիման կը գտնուի . տեսիլքի մը , եթերային  
էակի մը , պարիկի մը հաւատալ կ'ուզէր :

Իզուր չէր որ իբրեւ Բումանիոյ ամե-  
նագեղեցիկ կինը հռչակած էին զինք :

— Պարո՞ն , արտասանեց պաշտելի շար-  
ժուձեւով մը , արդեօք ներողամիտ պիտի  
գտնուիք իմ համարձակութեանս :

Շփոթութիւնս փարատելու և հանդար-  
տութիւնս վերասանալու համար ընդհուպ  
չպատասխանեցի իրեն . զինք գէպի թիկնա-  
թու մը առաջնորդեցի՝ ուր բազմեցուցի  
և ես իւր առաջ յոտին կանգնած .

— Տիկին , ըսի , ձեր աննախընթաց  
համբաւը ձեզմէ առաջ մտաւ այս անշուք-  
սենեակը . թոյլ տուէր որ նախ յարգանք-  
ներս մատուցանեմ ձեզ թէ՛ ըստ բումանա-  
նական , թէ՛ ըստ արեւելեան սովորօքէնք-  
ներու :

Խոնարհեցայ և համբոյր մը դրոշմեցի  
իւր թափանցիկ և թոթոչիկ ձեռքին վրայ .

ապա աջ ծունդս գետին հալեցնելով՝ իւր շրջազգեստին քղանցքը համբուրեցի:

— Ո՞հ, օ՞հ, կը տեսնեմ որ արեւելեան մեծարանքներն ես յոյժ չնորհալի են:

— Եւ այժմ, սիրեցեալ տիկին, եթէ կը թոյլազրէք՝ ես ես բազմիմ և ձեր հրամաններուն ներքեւ եմ:

Այս բոլոր տեղեկութիւնները, զորս Տիկին Թէաչսդու խնդրեց ինձմէ, իրենց կարեւորութեամբ չէ որ կը փայլէին. եղիպատկան կիմային, բարուց, վարուց, զուարձութեանց, հետաքրքրական վայրերուն, իդական սեռին գեղեցկութեան և հագուստ կապուստին վերաբերեալ ծանօթութիւններ, որոց կրցածիս չափ գոհացում տուի. մեր այս հաճոյալի տեսակցութիւնը հաղիւ կէս ժամ տեւած էր, երբ յանկարծ նստած տեղէն վեր ցատքեց գոչելով.

— Ո՞հ, պարո՞ն, որքա՞ն անխորհուրդ եմ. զձեզ հոս վար կը դնեմ՝ մինչդեռ դուք դուքս ենելու և հաւանաբար պտոյտի երթալու կը պատրաստուէիք:

— Տիկին, եթէ այդ պտոյտին մէջ նոյն իսկ տասնեակ մը հուրիներու ընկերակցին վիճակէր ինձ՝ գարձեալ հոս ձեր մօտ մնալ նախամեծար պիտի համարէի:

— Զափազնց կը փազաքշէք դիս:

— Ո՞հ, տիկին, ձեզ այդպէս վայել է ըսել՝ մինչ միւս կողմանէ ֆրանսերէն լեզուն ականջիս կը փսիսայ թէ ամօթապարտ

կ'զգայ զինք՝ զձեզ ըստ արժանաւոյն դրուատելու չափ պերճախօս բառեր չունենալուն համար:

— Կարի սրախօս էք. լաւ, սիրելի պարո՞ն, փոխանակ տասնեակ մը հուրիի, կ'ուզէք ք ձեր պտոյտը մէկ հուրիի հետ միւայն կատարել:

— Ամենայն սիրով, տիկին:

— Հինգ վայրկեանի մէջ պատրաստ պիտի լինիմ:

Զյապաղեցաւ վերադառնալու. սպիտակ մնդուսէ արդուղարդի մը մէջ հուրի մ'էր խսկապէս. ոսկեճամուկ քցափ մը աւելի ևս կը գեղազարդէր իւր հոյակապ չքեղաւթիւնը:

Ներս մտնելով՝ զուարթագին բացագանչեց.

— Հակագրութիւնն է:

Ակնարկութիւն իմ կրած տարագիս՝ որ համակ սեւ շըլիօթէ էր:

Ամբողջ օթեւանին մէջ տակնուվրայութիւն մը յառաջ բերելով՝ սանդուղներէն վար իջանք. չեմ կարծեր որ Ռումանացիք կարենան աւելի մեծարանք ընծայել իրենց ճշմարիտ թագուհուոյն՝ քան իրենց գեղեցկութեան դշխոյին. ամէն ոք յարգալից կը խոնարհէր:

Երբ դուռը հասանք՝ շարժում մ'ըրի հրապարակին վրայ կեցող կառքերէն մին կոչելու համար:

— Ո՞չ, սիրելի բարեկամ, եթէ դուք

ևս կ'ախորժիք, հետիւտն պիտի երթանք. պիտի ուղղուինք դէպի ծովեզը և անհուն կապուտակը դիտելով պիտի զբօնունք:

Եւ սկսանք վար իջնել պողոտայէն, քաղաքին ամենէն մեծափարթամ պողոտան:

Դիւթանքաշ տեսարանի մը մէջ կը կարծէի ինքզինքս. այն բոլոր մեծանոխ վաճառառններէն, որք մեր ճամբուն երկու կողմն իրարու կը յաջորդէին, ամէն ոք գէպի գուռ կը խուժէր. զմեզ դիտողներու ամբողջութեան գէմքին վրայ զարմացական նշան մը զետեղուած էր գողցես. անվրէպ ապշած մնացած էին տեսնելով զիս, օտարազգի մը, որ իրեն ընկերանալու մեծ պատույն արժանացած էի:

Մինչև ծովեզը քանան վայրկեանի ճանապարհ էր, բայց չուրջ ժամէ մը հոն հասանք, զի բազմաթիւ անձնաւորութիւնք աշահամբոյրի մօտեցան և իրեն հետ խօսակցեցան. իրաքանչիւր անգամուն զիս նորեկին կը ներկայացնէր և փոխադարձաբար. հետզհետէ կը սաստկանար զարմացումն՝ տեսնելով որ յիշատակած անուանց կը կցէր իրեւ հանգամանք ընդհանուր դատախազ, փաստաթե, թիշկի, երեալոյխան, մեծ կաղուածաւսէր, հրապարակդիր են, ևն:

Ուշադրութենէս չվրիպեցաւ որ, երբ Պրիսթօլ Սրճարանին առաջ հասանք՝ բոլոր հոն գտնուողներն և իմասնաւորի իմ նորաստաց բարեկամներս մեծաւ հետաքրքրութեամբ մեր անցքը կը դիտէին:

Ժամ մը ծովափը մնացինք. ի մէջ այլոց, փոխադարձաբար տեղեկութիւններ տուինք մեր ընտանեաց վրայ. ամուսինն և երկու աղջիկ ունէր. շահու խնդիր մը կարգադրելու համար եկած էր Քէսութէնձէ, ուր հաւասնաբար երկու շաբաթ պիտի մնար:

Նոյն ճամբէն վերադարձանք. Պրիսթօլ Սրճարանին ճիշդ գէմը կը գտնուի քաղաքին ամենէն համբաւաւոր ծաղարանն. առաջարկիս վրայ՝ հաւանեցաւ հոն մտնել:

Հազիւ բազմած էինք, ամէնուն ուշագրութեան և զարմացման առարկան լինելով, երբ մթերանոցին սեփհականատէրը հասնելով՝ երկուքի ծալլուելու չափ խոնարհեցաւ իւր առաջ և

— Տիկին, ըստու, այսօր մեծ պատիւ մը կ'ընէք մեր հաստատութեան. խորին երախտագիտութեամբ համակուած էնք:

Եւ պահիկ մը դադարէ վերջ.

— Այո՛, ապերախտ չենք. գիտենք ըստ արժանույն զայն գնահատել, յաւելեց, իւր ցուցամատը գէպի ծաղարանին յառաջակողմը կարկառելով :

Մեքենաբար մեր ակնարկները դէպի հոն ուղղեցինք. չափազանց կնամեծար՝ անշառէկ հրամաններ տուած էր իւր պաշտօնէրց, որք կ'սկսէին դրօշազարդել:

Մէկ մէկ պաղպաղակ խնդրեցինք և երբ ոոյն հաստատութենէն բաժնուիլ կը պատրաստուէինք.

— Սիրեցեալ բարեկամուհի, առաջարեցի իրեն, ճշմարիտ խօսելով՝ սպիտ համոյալից ընկերակցութեան վերջ դնել կարի դժմդակ կը թուի ինձ. ընթրիքի ժամը հասած է. իթէ հաճէիք ընդունիլ հրաւերս... .

— Ո՞ւր կ'առնէք ձեր ճաշերը:

— Իհարօրան Տրամու:

— Եւ ես Իհարօրան նիգոլայու. ձեր հրաւերը կ'ընդունիմ, բայց միակ պայմանաւ մը. սա թէ վաղն երեկոյին դուք ես իմ հրաւերեալս պիտի լինիք:

— Կ'ընդունիմ, յարեցի, բայց միակ պայմանաւ մը. սա թէ վաղն երեկոյին դուք ալ իմ հրաւերեալս պիտի լինիք:

— Եւ այսպէս յաջորդաբար, յաւելեց բրքջալիր:

Նոյն իրարանցումն՝ երբ ճաշարան մտանք. հրամայեց որ երկու հոգինոց սեղան մը տան մեզ. երաժշտաց խումբին պետք կոչեց. խնդրեց որ Վարդեռու վաղսն ածեն. նախ աղանդերի հետ առնուած գարեջուրն և ապա ճաշի հետ առնուած գինին աւելի ևս զուարթութիւն և մտերմութիւն պարզեցնին մեզ. յիշեցի յանկարծ թէ նոյն երեկոյ զուարթախան գուսաներգութիւն մը պիտի ներկայացուէր, որու տիտղոսն, Ապշիւշ-Համիսի Որդին, առաւօտուն ուշադրութիւնս գրաւած էր և որու ներկայ գտնուիլ մտադրած էի:

Համաձայնեցանք՝ թատրոն երթալով՝ երեկոյթնիս ի միասին անցընելու համար.

այդ թատերախաղին վրայ շատ ներբողներ կարդացած էր և, տեսած ըլինելով զայն, մեծ հաճոյքով պիտի ընկերանար ինձ :

Որպէս զի ներկայացումն ըստ կարելոյն հասկանալի լինէր ինձ՝ անոր նիւթը կը պատմէր առաջուց. Ռումանիոյ արքան րարեկամական ինքնազիր նամակ մ'ուղղած էր Սուլթան Համբարի և, ցաւ յայտնելով որ սոյն վերջինն օտար արքունեաց այցելելու սովորոյթ չունէր բնաւ, ինդրած էր որ գէթ իւր որդին հիւր ուղարկէ իրեն. սոյն փաղաքչալից հրաւերը մեծաւ հաճութեամբ ընդունուած էր. « Ե եղանակաւ վարպետորդի մը սոյն դիւանագիտական թղթակցութեան վերահասու եղած էր և մինչդեռ Սուլթանին որդին իւր պատրաստութիւնները կը տեսնէր՝ միւսն իրմէ շատ առաջ Պուքրէշ կը համնէր անոր տեղ անցնելով. փառայել պատիւներով կը հիւրասիրուէր, իշխանութիւններու հետ կը գարպասէր և ծանրագին նուէրներ ստանալով կը հեռանար. հարկ չկայ ըսել թէ երբ ապա բուն իսկ հրաւերեալը կը համնէր՝ իրբ նենդաւոր և խարերայ կը նկատուէր. ասկից աւելի հետաքրքրական և ծիծաղշարժ զաւեշտ մը կարելի չէր երեւակայել:

Ամբողջ ներկայացման միջոցին՝ իւր սրամիտ դիտողութեանց կ'ունկնդրէի հիազմայլ. թատրոնէն մեկնելով՝ ուղղակի օթեւան վերադարձանք. երբ իւր սենեկին բ.

դրան առաջ հասանք՝ կանգ առաւ հրաժեշտի համար :

Համբուրեցի իւր աջը, զոր վեհապետուհւոյ մը նման երկարել գիտէր. չնորհակալութեան մէկ քանի բառեր փոխանակեցինք, որոնցմէ վերջ յարեց.

— Գլխաւորաբար չմոռնաք թէ վաղը միջօրէին հրաւիրեալս էք :

— Կարելի՞ է միթէ, սիրելիս. վաղը միջօրէին մօտ հոս պիտի գտնուիմ և այժմ հանգիստ քուն մը և բարեբաստիկ երազներ կը մաղթեմ ձեզ. գալով ինձ՝ ես ա՛լ երազի պէտք չունիմ, զի ձեր շնորհիւ ժամերէ ի վեր վարդագոյն երազներու մէջ ապրեցայ :

Երբ սենեակս մասայ՝ արդարեւ այն տպաւորութիւնն ունեցայ թէ երազէ մը կ'սթափիմ. ինչպիսի անակնկալ, աննախընթաց դիպուած էր որ կը վիճակէր ինձ. չոգենաւին վրայ բարեյաջող աստղս կարգ մը մեծարանաց արժանացուցած էր զիս. այժմ անոնք բոլորովին կը նսեմանային սոյն եղական բաղդաւորութեան առաջ. մինչդեռ մինչ ցայն վայր աննշան օտարազգի մ'էի՝ այժմ համբաւ մը շահած էի. վստահ էի որ, հետեւեալ առաւօտ առանձինն դուրս ելնելուս իսկ, կրկին ամէնուն ուշագրութեան և խօսսակցութեան առարկան պիտի լինէի. չոգենաւին վրայ կրցած էի գտնել գաղտնիքին բանալին — այցաքարտս. բայց ա՛յժմ, ի՞նչ մեկնութիւն տալ սոյն ճշմարիտ հրաշքին :

Կասկած չկար թէ Տիկին թէտէսդու անունիս և ուրկից եկած լինելուս մասին տեղեկացած էր օթեւանին մուտքին մէջ զիտեղուած ցուցատախտակէն՝ որու վրայ իւրաքանչիւր սենեկի թուոյն առաջ կը նշանակուին ուղեւորին անունն ու ո՛ր երկրէ հասած լինելը :

Բայց ասիկա չէր բացատրեր թէ ի՞նչ էր շարժառիթն — եթէ կնոջական պարզ քմայք մը չէր — որով ո և է պատրուակի ներքեինձ հետ տեսակցիլ փափաքած և ապա մինչ կէս գիշեր ինձ ընկերակցելու հաւանած էր :

Եթէ երրէք խնդրոյն ներքեւ առեղծուած մը կար՝ հարկ չկար աճապարհ զայն լուծելու համար, քանի որ յաջորդ և վաղայաջորդ օրերը կրկին ի միասին պիտի անցընէինք :

Մանաւանդ զի ժամն առաւօսեան մէկն էր և պէտք չէր յամենալ անկողնոյն հրաւերին պատասխանելու :

Գ.

Երբ առաւօտուն արթնցայ՝ պայծառ արեգակ մը թափանցած էր սենեկիս մէջ. սիրալի օդ մը կ'ընէր՝ լիովին համապատասխան իմ հոգեկան վիճակիս. աննկարազգելի բերկութեամբ կը մտածէի այն հաճոյքնեւ-

րուն՝ որք նոյն և յաջորդ օրերուն համար ևս ինձ վերապահուած էին. միայն թէ նախքան զամենայն հետաքրքրութիւնն ունէի գիտնալու թէ ինձ վիճակած երանութիւնն ինչ տպաւորութիւն ըրած էր բարեկամներուս վրայ. փութացի ուրեմն դուրս ելնել և, անտարբեր որպէս ըստ սովորականի, Պրիսթօլ Սրճարանը մտայ:

Բոլոր աղքակիցներս ակումբ մը կազմած էին և, տրուած լինելով այն գոհունակութիւնն որ նկարուեցաւ իրենց դիմաց վրայ համնիլս տեսնելով՝ դիւրին էր մակարերել թէ անձկանօք իմ գալստեանս կ'սպասէին:

— Վերջապէս եկաք, կ'ըսէին ինձ նոյն խակ գեռ Սատուծոյ բարեւը չփոխանակած, անհամբեր ենք գիտնալու թէ ինչպէս ծանօթացաք և բարեկամութիւն հաստատեցիք Տիկ. Թէտէսգուի հետ:

Մէկ քանի բառերով բացատրեցի և ձշգրտեցի թէ այդ բարեկամութիւնը չարաչար մեկնելու չէին:

Յայնժամ անոնցմէ մին, վառվուն երիտասարդ մը, յարեց.

— Սիրելի բարեկամ, ամէնուն կողմանէ ևս պիտի խօսիմ. արդ ունկն զրէք ինձ և մի՛ ընդմիջէք լինաւ. նախ յայտարարեմ թէ ձեր ըրած վերապահութիւնը բոլորովին աւելորդ էր և եթէ, հակառակ այն ծանրաբարոյութեան, զոր ստուգած ենք ի ձեզ, այդպիսի յաւակնութիւն մը յուռաջ դնէիք՝

մենք առաջինները պիտի լինէինք հաւատ չընծայող. Տիկ. Թէտէսգու, Թէտէսգու հարիւրապետին կինը, բացարձակապէս պարկեշտ կին մ'է. ատոր տարակոյս չկայ եւ տարբեր կերպիւ չէր կրնար լինել. գիտէք հարկաւ թէ Բումանիոյ ամենագեղեցիկ կինն է և թէ մեր երկրին մէջ կատարուած գեղեցկութեան բոլոր մրցումներուն մէջ առաջին մրցանակ շահած է անխափան:

Սոյն վերջին տեղեկութիւնը նոր էր ինձ համար և աւելի ևս կը փայփայէր իմ անձնասիրութիւնս:

— Եթէ գեռ անձամբ չճանչցաք՝ գէթ համբաւով կը ճանչէք զՏիար Մ . . . , մեր ամենահարուստ ազգակիցն, որու ծովեզերքին վրայ կառուցած ամենաչքեղ ապարանքն ամէնուն հիացման առարկան է, ապարանք, զոր մեր Վեհապետն իսկ տեսնելու հետաքրքրութիւնն ունեցած և այդ առթիւ իրեն այցելելու բացառիկ պատիւն ըրած է:

— Սրդարե համբաւով միայն կը ճանչեմ զինք:

— Մի՛ ընդմիջէք, ինորեմ, և ուշադիր եղէ՛ք. պիտի պատմեմ գէպք մը, որ ասկից երեք տարի առաջ տեղի ունեցաւ, օրերով խօսակցութեան նիւթ մատակարարեց ամբողջ երկրին և արձագանք գտաւ բոլոր թերթերու մէջ. այդ թուականին Թէտէսգու հարիւրապետը դեռ պաշտօնով փոխադրուած էր ի մայրաքաղաք և հոս կը լինակէր. Տիկ.

Թէտէսգու և մեր ազգակիցն, երկուքն ալ  
բարձր դասակարգէ, պատեհութիւն կ'ունե-  
նային յաճախ իրարու հանդիպելու հաւա-  
քոյթներու մէջ. Տիար Մ... անխոնջ դարպաս  
մը կը մատուցանէր գեղուհոյն, ինչ որ ըն-  
կերական պայմանադրութիւնք կը թույլազրեն  
ընել ամենէն պարկեշտ կանանց. բայց ի հար-  
կէ անհետեւանք :

Օր մը մեր ազգակիցն, արդեամբ ար-  
տառոց, հետեւեալ տոմսն ուղղած էր Տիկ.  
Թէտէսգուի :

### «Սիրեցեալ Տիկին,

Անհունապէս փափաքող եմ ձեզ հետ  
առանձինն ճաշ մ'ընելու. ո'չ իմ բնակարա-  
նիս, ո'չ ալ ձերինին մէջ. ճաշարանի մը  
մէջ. ո'չ մասնաւոր սենեկի մը, այլ ընդհա-  
նուր սրահին մէջ. եթէ սոյն հրաւէրս չմեր-  
ժելու չնորհն ընէք ինձ՝ պատիւ պիտի ունե-  
նամ ձեր աղքատաց համար քսան հազար  
լէյ ձեր տրամադրութեան ներքե դնելու»:

Ի պատասխանի միակ բառով հեռագիր  
մը ստացաւ. լնդունուած:

Յշաւակելի սոյն հոյակապ հացկերոյթը  
նշանակեալ օրին տեղի ունեցաւ քաղաքիս  
առաջնակարգ օթեւաններէ միոյն ճաշա-  
ռահին մէջ և Տիկ. Թէտէսգու իւր անձեռո-  
ցին ծալքին ներքե գտաւ քսան հազար լէյ-  
նոց չէք մը. սոյն գումարն, իւր հոդածու-  
թեամբ, տեղւոյս աղքատ ընտանեաց բաշ-  
խուեցաւ ապաքէն:

Արդ, կը հարցնեմ, ի՞նչ բաղդաւորու-  
թիւն է ձերը. Տիկ. Թէտէսգու, որու հետ  
առանձինն կարենալ ճաշելու համար, մեծա-  
փարթամ Մ... քսան հազար լէյի չէք մը  
կը նուիրէ իրեն, երէկ ձեղ հետ պտոյտ  
կ'ընէ, ձեղ հետ կ'ընթրէ, ձեղ հետ թատրոն  
կ'երթայ, զի ամէն մանրամասնութիւն գի-  
տենք. կը մեկնութիւն մը գտնել այս  
հրաշալիքին :

Ճիշդ պատեհութիւնն էր աւելի ևս գըր-  
գուելու սոյն բարեկամներու :

— Ո՛չ, դժբախտաբար. կրնամ միայն  
ձեզ հաղորդել թէ այսօր միջօրէին իւր կող-  
մանէ ճաշի հրաւիրուած եմ և թէ ապահո-  
վաբար երեկոյին ևս ի միասին պիտի ընթ-  
րենք :

Ուզեւորութեան ընկերս, Տիար Ա.Պալ-  
եան, միշտ խոհական, յայտնապէս ուզելով  
երիտասարդաց նախանձու սրտմութիւնը  
չափաւորել.

— Եղբա՛րք, ընդմիջեց, կնոջական քմա-  
հաճ արարքի մը առաջ կը գտնուինք, որու  
մեկնութիւնը հետազօտել՝ պարզապէս յի-  
մարութիւն պիտի լինէր. բաւականանք  
իննդակցելով մեր բարեկամին բաղդաւորու-  
թեան՝ ցույիփի գաւաթներու բաղխիւններով :

Եւ այնպէս ալ ըրբինք :

Միջօրէի մօտ հրաժեշտ առի և փութացի  
յօթեւան, ուր Տիկ. Թէտէսգու, բոլորովին  
կազմ՝ ու պատրաստ, կ'սպասէր ինձ. իւր

ճաշարանը գացինք. ապա կրկին օթեւան, ուր իրարմէ բաժնուեցանք՝ ժամը չորսին շրջագայութեան երթալու ժամադրութեամբ. այդ օրը մակոյկով ծովու վրայ պտոյտ մը կատարեցինք՝ քարափին մէկ ծայրէն միւսն՝ ինչ որ շուրջ ժամ մը տեւեց :

Երբ օդնութեամբս մակոյկէն դուրս ելաւ — քարափին ո՛չ բազմամարդ մէկ անկիւնն էր — յանկարծ դէպի անցորդ մը ուղղուելով՝

— Տիա՛ր Մ . . . , Տիա՛ր Մ . . . , դոչեց :  
Եւ ինձ դառնալով՝

— Զձեզ ձեր ամենէն ականաւոր հայրենակցին պիտի ներկայացնեմ :

Տրուած անունը կը բաւէր. քանի հազար լէյնոց չէքը ստորագրողն էր :

Տիար Մ . . . հիախառն ապշութիւն մ'ունեցաւ զինք տեսնելով. անշուշտ զնէ ի Պուրբէշ կը կարծէր. աջահամբոյրի մօտեցաւ. ներկայացումը տեղի ունեցաւ և մէկ քանի մեծարաբից բառեր փոխանակեցի իրեն հետ. ապա մեր ազգակիցն ողոքիչ խօսքեր ուղղեց ընկերուհոյն, որոնց մէջ նոյն առաւոտեան պատմութեան ակնարկութիւններ կային :

Երբ բաժնուեցանք՝ հարցուցի Տիկ. Թէտէսպուի թէ ի՞նչ կը նշանակէին այդ ակնարկութիւնները :

— Ոչի՞նչ, անցելոյն մէջ Տիար Մ . . . ինձ համար յիմարութիւն մ'ըրած է :  
— Որպէս թէ չգիտեմ :

— Ի՞նչպէս, արդէն պատմեցին գայն ձեզ :

Ըստ կանխագոյն որոշման՝ ի միասին ընթրելէ և կրկին թատրոն երթալէ վերջ՝ այս անգամ ուղղակի օթեւան չվերադարձանք. առաջարկեցի որ, ինչպէս հանդիսականաց մեծ մասը, մենք ևս երթանք սակաւ ինչ ժամանակ անցընելու այն ծաղարանն որ, նախընթաց օր, ի պատիւ իրեն գրօշազարդած էր :

Երբ հոն հասանք՝ մեծ ոգեւորութիւն կը տիրէր արդէն. սեփինականատէրը, բացառիկ յարդանքներով, զմեղ առաջնորդեց սեղանի մը մօտ, որ սրա հին մէջտեղը կը գրանուէր. շուրջերնիս բազում ծանօթ և համակիր դէմքեր, որք մտերմօրէն կ'ողջունէին զմեղ, շատերն այն անձնաւորութիւններէ, զորս երկու օրէ ի վեր ներկայացուցած էր ինձ :

Երկու գաւաթ բալօղի (marasquin) և կարկանդակներ խնդրեցինք :

Զափազանց զուարթ էր. նոյնպէս ես. կը պատմէր թէ առաւոտուն իսկ գրած էր իւր ամուսնոյն՝ ներբողներով խօսելով իմ վրայ, թէ չէր կասկածեր որ նա շատ գո՞ն պիտի մնար ինձ նման չնորհքով բարեկամ մը ստանալուն, թէ կը յուսար հետեւեալ առաւոտ իսկ պատասխան ընդունիլ, զոր պիտի կարդար ինձ :

— Ինդրանք մը ունիմ սակայն ձեղմէ,

յարեց հրապուրիչ պէրանօք մը . սոյն երկու օրուան մէջ բազմիցս ստուգեցի թէ չափա- զանց սրամիս էք . եթէ չնորհ ընէիք մէկ քանի տողեր գրելու ալպօմիս վրայ . . .

Զայս ըսելով՝ իւր ձեռնպարկէն հանեց գեղակերտ և ոսկեզօծ ալպօմ մը , զոր ինձ ներկայացուց :

— Սիրով պիտի համակերպիմ ձեր խնդրանց , չքնաղ բարեկամուհիս , միայն կը վախնամ թէ յուսախարութիւն ունենաք :

Եւ , վայրկեան մը մտածումէ վերջ , արդէն լեցուած էջերուն յաջորդող ամբողջովին պարապ էջին վերեւը գրեցի .

*Je suis certain que si Dieu dictait de nos jours ses dix commandements à Moïse , il en aurait sensiblement modifié le premier: «Adore Dieu au ciel et Nina sur terre.»*

Ապահով եմ որ եթէ Աստուած մեր օ- րերը Մովսէսի տուն տար իւր տասն պատ- ուիրանքները՝ զգալապէս պիտի փոփոխէր ա- նոնց առաջինը . «Պաշտէ՛ զԱստուած յ'եր- կիսս և զնինա յ'երկրի :»

Տիկ . Թէտէսգու կարի անկեղծ և կարի եռանդուն կին մ'եր . կարող չէր ինքինք զապել՝ երբ ո և է սաստիկ զգացում մը ար- տայայտելու հարկը ներկայանար . անշուշտ միշտ բարեյաջող աստղիս չնորհիւ . սոյն տո- ղերն իրեն հիանալի թուեցան . ոտքի ելաւ և

մեր շուրջը գտնուող ծանօթներուն գոչեց խանդավառ :

— Եկէ՛ք , տեսէ՛ք , բայց հրաշալի է . տասն և հինգ տարիներէ հետէ Բումանիոյ գեղեցկութեան թագուհին եմ . տասն և հինգ տարիներէ հետէ այնքան չնորհալից տողեր ձօնուեցան ինձ . սակայն երբէ՛ք , երբէ՛ք . . .

Ակնթարթի մը մէջ մեր սեղանին շուրջ ականաւոր անձնաւորութիւններ բոլորուե- ցան . մեծ շրջանակ մը կազմեցինք . ամէն ոք կը չնորհաւորէր զիս :

Փառամիրութիւնը չափ ու սահման չճան- չեր . սոյն պաշտեցեալ կինը փառաց գագաթ- նակէտը հասած էր արդէն և աւասիկ յա- փշտակուած կը մնար սոյն մէկ քանի տողե- րուն առաջ , որք ի հարկէ նոր բան մը չէին ըսեր իրեն , այլ ինչ որ շարունակ իրեն կը յեղյեղուէր , թերեւս քիչ մը սիրուն դարձ- ուած բռլ :

Կզգայի թէ այդ վայրկեանէն խսկ աւելի ևս իւր համարման արժանացած էի . ինձ ուղղած ակնարկը համակ երախտագիտու- թիւն էր . ակներև էր թէ ա՛լ վաղանցուկ բարեկամ մը լինելու սահմանեալ չէի , այլ բարեկամ մը որ անջինջ յիշատակ մը պիտի թողուր :

— Հատ մը ևս , մրմնջեց մտերմօրէն բազուկէս կախուելով , ասիկա այնքան դիւ- րին բան է ինչ համար :

Առաջին անգամ լինելով կը գուղէր զիս :

Բալօղիի գաւաթները մէկ քանի ան-  
դամներ կրկնուած էին. գլուխս տաքցած  
էր. արդէն երկու օրէ ի վեր ապրած կեանքս  
բոլորովին այլափոխած էր զիս. գողցես  
տարիքին կէսը նետած էի ուսերուս վրայէն:

— Աւելի՞ն պիտի ընեմ, ոիրեցեալ բա-  
րեկամուհի, այս էջն ինձ կը վերապահեմ և  
հրմա իսկ պիտի լիցնեմ զայն. ամօթ պիտի  
լինէր այսքանը չկարենալ ընել՝ երբ մարդ  
երկու օր անընդհատ կախարդիչ ընկերակ-  
ցութիւնդ վայելած է:

Եւ մէկ քանի դադարներով՝ լեցուցի  
նոյն էջը հետեւեալ հասուածներն եռ գրե-  
լով:

*J'ai cinquante ans et je croyais avoir vu depuis cinquante ans la lumière. Quelle erreur grossière! Je vivais dans les ténèbres et la lumière, je l'ai vue pour la première fois en contemplant Nina.*

Յիսուն տարեկան եմ և յիսուն տարի-  
ներէ հետէ լոյսը տեսած լինել կը կարծէի.  
որպիսի չարաչար սխալանք: աղջամուղջնե-  
րու մէջ կ'ապրէի, և լոյն առաջին անդամ  
տեսայ՝ տեսնելով զնինա:

*Toute femme jeune, en consultant chaque matin son miroir, dit avec tristesse et amertume: «Je suis un peu moins jolie qu'hier.» Il n'y a que Nina qui dise*

*avec joie et triomphe: «Je suis un peu plus jolie qu'hier.»*

Ամէն նորատի կին, իւրաքանչիւր առա-  
ւու իւր հայելին նայելով, ախրութեսմբ և  
դառնութեամբ կ'ըսէ. «այսօր երեկուընէ քիչ  
մը նուազ սիրուն եմ:» Միայն նինան կայ,  
որ ուրախացին և յաղթապանծ ըսէ. «Այսօր  
երեկուընէ քիչ մը աւելի սիրուն եմ:»

*Un seul Dieu est désormais inadmis-  
sible pour moi; car je ne puis croire  
qu'un Dieu tout seul ait pu créer Nina,  
quelle que fut sa toute-puissance.*

Յետ այսորիկ միակ նոտուած մը անդն-  
զունելի է ինձ համար, որովհետեւ անհնարին  
է ինձ հաւատալ թէ Աստուած մը. բոլորովին  
առանձինն, կարողացած լինի ստեղծել զնինա՝  
ինչ որ ալ եղած լինի իւր ամենակարողու-  
թիւնը:

*Depuis que j'ai eu l'ineffable bonheur  
de connaître l'adorable créature à qui sont  
dédiées ces lignes, une chose m'a frappé.  
C'est que tous ceux qui l'abordent ont  
deux fois l'éblouissement et cliquotent les  
yeux. D'abord quand ils s'inclinent pour  
la baise-main, apparemment pour pouvoir  
supporter le feu de ses bijoux; ensuite  
quand ils se redressent, certainement pour  
pouvoir soutenir l'éclat de ses yeux.*

Յորմէ հետէ անճառելի բաղդաւորութիւնն ունեցայ ճանչելու այն պաշտելի արարած՝ որու սոյն տողերը ձօնեալ են, բան մը ուշադրութիւնս դրաւած է. սա թէ ամէն անոնք որ իրեն կը մօտենան՝ երկու անդամ շացում կ'ունենան և աշքերնին կը բացիւրփեն. նախ երբ աջահամբոյրի համար կը խոնարհին՝ հաւանաբար իւր գոհարեղէններուն շողարձակման կարենալ հանդուրժելու համար. ապա երբ կը շտկուին՝ անկասկած իւր աչաց հուրին կարենալ դիմադրելու համար:

*J'ai un petit conseil à donner à la toute charmante propriétaire de ce magnifique album; c'est de ne jamais faire l'imprudence de prononcer dans un moment irréfléchi ces mots sacrés empruntés à l'Evangile et passés en proverbe: «Qui m'aime me suivre!» Elle verrait sûrement toute une armée derrière elle.*

Փոքրիկ իրատ մ'ունիմ տալիք սոյն շքել ալզօմին ամենագեղանի տիրուհոյն. սա թէ երեք անխոհեմութիւնը չընէ անխորհուրդ վայրկենի մը մէջ արտասանելու Աւետարանէն փոխ առնուած և առածի կարդ անցած սա նույրական բառերը. «Զիս սիրովը թող ինձ հետեւի:» Ապահովապէս ամբողջ բանակ մը պիտի տեսնէր իւր ետև:

Կարելի չէ նկարագրել այն խորին հիացումը, զոր սոյն հասուածներն ազդեցին

Տիկ. Թէտէսգուի, անոնք նմանապէս ընտիր տպաւորութիւն մ'ըրին մեր բոլոր սեղանակիցներուն վրայ, պարոն մը մօտեցաւ իրեն և խնդրեց որ զինքն ինձ ներկայացնէ. շ'էնտիրանան Ռումենիք թղթակիցն էր. թողառութիւն խնդրեց ինձմէ այդ չքնաղ գոհարներն, որպէս կ'անուանէր ինք, իրենց թերթին մէջ հրատարակելու:

— Զիս կը չողոքորթէք, սիրելի պարո՞ն, պատասխանեցի. դիտողութիւն մը միայն. ստոյգ է թէ ե՞ս ի գիր առի զանոնք, բայց այլ եւս իմ սեփհականութիւնս չեն. այդ արտօնութիւնը տիկինէն պէտք է խնդրել:

Բարեկամուհիս չզլացաւ զայն, որպէս յուսալի էր, և շարթուան ընթացքին մէջ շ'էնտիրանան Ռումենիք գրական բաժնին մէջ հրատարակուեցան իմ ստորագրութեամբ, որու քով փակագծի մէջ դրած էին Եղիպտոսէ. խորագիրն էր. Քաղուած Ռումանիոյ գեղեցիութեան վեհապետուհոյն աղջունել:

Ժամն երեք կը հաչէր՝ երբ բաժնուեցանք ծաղարանէն. ա'լ զոյգ մը մտերիմներ եղած էինք. տարիներէ ի վեր ամրապնդեալ բարեկամութիւն մը աւելի սերտ չէր կրնար լինել. որոշուած էր որ ա'լ ի միասին պիտի անցընէինք այն երկու շաբաթներն՝ որք իւր գործոց կարգադրութեան համար հարկաւոր էին և թէ ես ալ մինչ իւր մեկնումը պիտի յետաձգէի իմս, մեր մեկնումի օրերը պիտի

զուգաղիպեցնէլինք. միջօրէին զինք կայարան  
պիտի առաջնորդէի և երեկոյին շողենաւ  
պիտի առնէի վարչա անցնելու համար :

Այս որոշմանց վրայ՝ որք զմեզ հաւա-  
սարապէս ցնծութեամբ կ'ողողէին, հրաժեշտ  
առինք մէկզմէկէ, հետեւեալ օր գարձեալ  
միջօրէին զիրար գտնելու հաստատ առա-  
ջադրութեամբ :

## ¶.

Յաջորդ օրը, հինգչարթի, Եղիպատոսի  
սուրհանդակին օրն էր. առաւօտուն գուրս  
չելայ թղթակցութիւնս պատրաստելու հա-  
մար :

Հաղիւ պիտի սկսէի այդ աշխատութեան՝  
սենեկապան սպասուհին եկաւ իմաց տալ թէ  
Տիկ. Թէտէսպու պահիկ մը զիս տեսնել  
կ'ուզէր. բարեկամուհիս գարմանք յայտնեց  
զիս գտնելուն՝ որովհետեւ գիտէր թէ ամէն  
առաւօտ բացակայ կը լինէի. պատճառը բա-  
ցատրեցի :

Իւր ամուսինէն պատասխան ստացած  
էր և, ըստ իւր խոստման, կը բերէր զայն  
թարգմանաբար ինձ կարդալու. որպէս կը  
յուսար՝ հարիւրապետը յոյժ մեծարալից տո-  
ղեր նուբիրած էր ինձ և կը յանձնարարէր  
իւր տիկնոջ ստիպել որպէս զի կամ ի Պուլ-  
կարիա երթիս, կամ անկէ վերադարձիս Պուլ-

բէշէ. անցնիմ. կարի փափաքող էր անձամթ  
ինձ հետ տեսակցնելու համոյքն ունենալու :

Ուզի կեցած էր. չէր կրնար մնալ՝ զի  
գուրս ելնելու պարտաւոր էր. միջօրէին  
պիտի վերագառնար զիս առնելու համար :

Այն պահուն, յորում մեկնելու կը պատ-  
րաստուէր, սենեկապան սպասուհին կրկին  
ներս մտաւ և հեռագիր մը ներկայացուց  
ինձ :

Գունաթափ եղայ :

Ընտանիքս և գործատեղիքս հեռու  
հեռագիր մը չարագուշակ կը թուէր ինձ.  
այդ հեռագիրն անկասկած կամ լնտանիքս,  
կամ վաճառատունէս ուղղեալ լինելու էր,  
որոնց միայն հաղորդած էի հասցէս և նոյն-  
քոն անկասկած՝ կամ ըստանեկան, կամ  
առեւտրական գժրախտութեան մը բօթը կը  
բերէր ինձ. եթէ ոչ ինչո՞ւ հեռագրէին :

Զերմնուս ձեռքով մը խղեցի զայն և  
կարդացի .

«Հունիկ -Արքայական Օրեւան- Քհուրելնիկ

Այս երեկոյ իսկ կը հասնիմ կար:

ՀԱՐԻԿԻՐԱՊԵՏ ԹԵՇԵՄԴՈՒ

Տիկ. Թէտէսպու, որ անձկութիւնս նըշ-  
մարած էր, առանց բառ մ'արտասանելու  
իւշարժմանց հետեւած էր սրբամորմոք. երբ  
ժպիտի մը ուրուագծուիլը տեսաւ շուրջե-  
րուս վրայ՝ շունչ առաւ :

— Կարդա՛, սիրեցեալ բարեկամուհիս, ըսի վարդագոյն թէրթիկն անոր կարկառեւրով, ասոր չէիր սպասեր անշուշտ. հարիւրապետն՝ որ ինձ կլուացնէ այս երեկոյ իսկ իւր ժամանումը սպասնալից շեշտով մը :

Երկուքս ալ քրքջալիր խնդացինք. նախանձորդ մը — կը մտածէի թէ իմ նորաստաց բարեկամներէս բարեծաղիկ մը լինելու էր, ինչ որ ի վերջոյ հաստատուեցաւ — ինձ խաղ մ' ընել ուզած և ի Պուքրէշ իւր մէկ թղթակիցէն խնդրած լինելու էր նոյն բառերով հեռազիր մ' ուզլել անուանս. և սակայն խաղն ի դերև կ' ենէր. հինգ վայրկեան չկար որ հարիւրապետին շնորհալից տողերը կարդացած էինք :

Սոյն զուարիթ միջաղէպին վրայ իրարմէ բաժնուեցանք և այլեւս աշխատութեանս ձեռնարկեցի :

Դեռ ժամ մը հազիւ սահած էր՝ երբ անգամ մը ևս դուռս բաղխուեցաւ, բայց սենեկապան սպասուհւոյն զգուշաւոր բաղխիւնը չէր այս անգամ. ուժդնակի հարուած մ' էր. զարմանալի էր ասիկա. փութացի անձամբ բանալ տեսնելու համար թէ ի՞նչ կար :

Մեծ եղաւ ապշութիւնս :

Տիկ. Թէտէսգու խելայեղ ներս խուժեց :  
— Զէ՛ք գիտեր թէ ի՞նչ պատահեցաւ ինձ :

Եւ գնաց նուազեալ խնկաւ բաղմոցին վրայ :

Գրուած էր որ իւրաքանչիւր օր նոր անակնկալ մը վերապահած պիտի լինէր ինձ. վայրկեան մը շփոթեալ մնացի. ապա անոնիջապէս հնչակին վագեցի սենեկապան ոպասուհին կոչելու համար և ի միասին ջանացինք մարձանքներով ուշաբերել տալ զինք. քօլոնիական ջուրով շփումներ, մի քանի կաթիլ կազդուրիչ՝ զոր խմցուցինք և աղեր՝ զոր հոտոտել տուխնք հազիւ կրցան սակաւ ինչ խելաբերել զինք. նուազեալ աչքերը բացաւ. միշտ նոյն բառերը կը կրկնէր որպէս յանկերդ մը .

— Զէ՛ք գիտեր թէ ի՞նչ պատահեցաւ ինձ :

Նոյն պահուն գարձեալ գուռս ափ առին. թոյլտուութեանս վրայ մէկը ներս մտաւ. իւր զիլսանոցը կը յայտնէր թէ օթեւանի թարգման էր, կօնտրայի Օթեւանին թարգմանը, նոյնպէս նշանաւոր օթեւան մը :

Արմացայ զարմացայ նշմարելով որ Տիկ. թէտէսգուի գլխարկին ու քողիկն անոր ձեռաց մէջ կը գտնուէին :

— Ներեցէք, պարո՞ն, Տիկ. Թէտէսգու հո՞ս կը գտնուի, որպէս ինձ ըսին :

— Ի՞նչ կ'ուզէք իրմէ :

— Սոյն առարկաներն և տոմսակ մ' ունիմ իրեն յանձնելիք :

Առարկաները սեղանին վրայ դրաւ և տոմսակը ներկայացուց նինայի, որ սոյն թատերական մուտքին վրայ ոթափած և հրա-

մայած էր որ զայն տայ իրեն, նորեկը չէր  
մեկներ՝ պատասխանի մը ոպասելու ակներև  
մտադրութեամբ :

Տիկ, Թէտէսգու ջղագրգիռ բացաւ տոմ-  
սակը, հազիւ զայն կագուաց՝ կատաղօրէն  
բղքտեց և նետեց, ապա գոշեց թարգմանին .

— Դացէ՞ք, պարո՞ն, բաէ՞ք իրեն թէ  
երբէ՞ք, բայց երբէ՞ք չեմ հածիր զինք ըն-  
դունելու :

Մինչդեռ մարդուկը իսոնարհելով կը մեկ-  
նէր՝ բարեկամուհիս, ի գործ զրած վերջին  
ձիգին հետեւանօք, կրկին կը նուալէր :

Կատարեալ առեղծուածի մը առաջ կը  
գտնուէի :

Նորէն սկսանք մեր դարմանման, երբ  
ըստ բաւականի խելաբերեցաւ .

— Սիրելիս, ըսի իրեն, ինքինքող լիո-  
վին գտնելու համար բաց օդի պէտք ունիս .  
օն, փութանակի դուրս ենենք, վատահ եւ  
որ սոյն թեթև տափնապն ընդհուպ պիտի  
անհետի և նախորդ օրերուն պէս զուարթօ-  
րէն պիտի ճաշենք :

Զալատասխանեց, մեքենաբար ինձ հնա-  
զանդեցաւ և երբ օթեւանէն մեկնելով՝ տ-  
մայի ուղիէ մը կը յառաջանայինք բացավայր  
մը գտնելու համար, բազուկէս կախուած  
վերսկուաւ իւր յանկերգը .

— Զէ՞ք զիտեր թէ ի՞նչ պատահեցաւ  
ինձ :

Տիկ վերջ յանկերգը փոխուեցաւ :

— Բարեկամս, վրէժ լուծել կ'ուզեմ:

— Վրէժդ պիտի լուծենք, նիսա, ատիկա  
ինձմէ զիտիր, վատահացուցի, ոչինչ զիտ-  
նալով հանդերձ թէ ինչի վրայ էր խնդիր :

Հասարակաց Պարտէզին առաջ հասած  
էինք, ներս մուանք և զրօնարանը բազմեցանք.  
կազդուրիչ ըմպէլիք մը առնել տուի իրեն .  
ա'լ կ'սկսէր բոլորովին վերստանալ իւր հան-  
դարտութիւնը :

Եւ միաւ պատմել :

Ի Պուքքէ իրեն դարպաս մատուցանող-  
ներու շարքին մէջ՝ կը գտնուէր Տիար Սթէ-  
ֆանէսգու, մայրաքաղաքին ոսկեզօծ երի-  
տասարդութեան ամենէն կարկառուն դէմ-  
քերէն մին, անուանի հասութատէր :

Նոյն առաւետ տեղեկան թերթի մը մէջ  
կարդացած էր թէ Տիար Սթէֆանէսգու  
Քէօսթէնձէ ժամանած էր :

Ինձմէ բաժնուելէն վերջ՝ երբ Լուսրայի  
Օրեւանին առաջէն կ'անցնէր՝ չարադիպու-  
թիւնն ուզած էր որ ճիշդ այդ պահուն ա-  
նիկա ալ հոնկից դուրս ենէ. զինքնչմարած,  
իւր մեծարանքները մատուցած և ինդրած  
էր որ պահիկ մը տեսակցին օթեւանին հիւ-  
րասրահին մէջ. հետաքրքիր զիտնալու իւր  
բացակայութենէն ի վեր իրենց ընկերութեան  
մէջ շրջաբերութեան դրուած շոգմոգութիւն-  
ները (cancan)՝ Տիկ, Թէտէսգու չէր մերժած  
և ընկերացած էր իրեն. երբ այդ սրահը հա-  
սած էին՝ իւր հանգստաէտութեան համար  
գլխարկն ու քողիկը հանած էր :

Եւ սկսած էին իրենց աշխարհիկ խօսութառտուքին, զոր սոյն երիտասարդը գիտէր մասնաւորապէս հաճելի բնծայել :

Յանկարծ, հաւանաբար իւր պաշտած կող հետ առանձնակի գտնուելու պատեհութենքն ազդուած և անոր անդիմադրելի համարէն կախարդուած՝ խելայեղութեան սոպայ մ'եկած էր Սթէֆանէսպուի վրայ . ընդուստ տեղէն ցուտքած, զրան փականքը դրած և, անոր առաջ տնկուելով, մոլեգնօրէն գոչած էր .

— Նինա՛, կամայ թէ ակամայ այսօր իմս պիտի լինիս :

Սոսկումի բարձրագոչ ձիչեր Տիկ. Թէսէսպուի կողմանէ . սոյն աղաղակներուն վրայ՝ Նրբանցքին մէջ ոտից դոփիւններ . եկած էին դուռն ափ առնել և ահա սոյն ինքն Սթէֆանէսպու, շմորեալ և գունաթափ, եկած բացած էր զայն :

Նինա, ահարեկեալ, ո՛չ իսկ մտածուծ էր իւր գլխարկին ու քողիկն առնելու . իսկոյն այդ անիծեալ վայրէն խոյս տուած, կառքի մը մէջ նետուած, ուղղակի ինձ եկած և նուալած էր :

Օթեւանին թարգմանը հետեւեալ տոմսակը բերած էր իրեն :

«Տիկին,

Մտամոլորման սոսկալի վայրէնի մը մէջ՝ յարգանաց անլուր և աններելի թերութիւն մը գործեցի հանդէս ձեզ . բանով մը

չպիտի կրնամ քաւել սոյն պամբարչտութիւնս . նորհ ըրէք սակայն որ գամ ծնրադիր ներում ինդրեմ ձեզմէ, ո՛չ թէ ստանալու համար այդ ներումն՝ որու արժանի չեմ, այլ իմ խորախորին զղմանս մէկ ակներեւ յայտարարութիւնն ընելու համար :

ՍԹէֆանէսպուի

Գիտենքթէ ի՞նչ բաղդի և որպիտի՛ պատասխանի արժանացաւ սոյն տոմսակը :

Սոյն պատմութիւնն աւարտելով՝  
— Եւ այժմ, յարեց, վրէժ լուծել կ'ուշեմ:

Անմիջապէս մտածեցի իմնորաստաց բարեկամներէս Սիլվեանի, որ մայրաքաղաքին Աւերյիկրուլ կարեւոր թերթին Քէսութէնձէի թղթակիցն էր և ամէն երեկոյ անոր քրոնիկ մ'ուղարկել պարտաւոր էր :

— Նինա, պատասխանեցի, կ'ուզե՞ս որ այդ ամբարիշտը պախարակենք թերթի մէջ . Աւերյիկրուլ թերթին տեղւոյս թղթակիցն իմ բարեկամու է և յոյս ունիմ որ նմանօրինակ ձառայութիւն մը չմերժեր ինձ :

Սոյն գաղափարը հաճելի թուեցաւ իրեն և որոշեցինք որ նոյն օրն իսկ ամէն ինչ պիտի կարգադրէնք որպէս զի երեկոյին յօդուածն ուղարկուէր և հետեւեալ առաւօտ իսկ թերթին մէջ կարգացուէր :

Միջօրէն կը մօտենար . կառք մ'առինք՝ որ զմեղ նիգօլայու ճաշարանն առաջնորդեց . բարեկամուհիս ա՛լ լիովին վերադասած էր իւր

զուարթութիւնը, մանաւանդ զի իւր կնոջական վրէժինդրութիւնը գոհացում պիտի դանէք :

Ժամանակ չկար կորսնցնելու. պէտք էր անյապաղ աեւնել քրոնիկագիրս. մէկ քանի վայրկեանի համար թոյլտուութիւն ինդրելով՝ վազեցի Պրիաթօլ Սրճարանն, ուր գեռ զինք գտնելուս ապահով էի գրեթէ. արդարեարեկամներու հետ իւր ախորժաբերն առնելու վրայ էր :

Խնդրանացս վրայ մեկուսի քաշուեցանք. մէկ քանի բառերով խնդիրը բացատրեցի և յայտնեցի թէ ի՞նչպիսի ծառայութիւն մը կ'սպասէի իրմէ :

— Սիրելի՛ս, դուք հրապարակագիրներու կեանքին անտեղեակ մէկը չէք, յարեց. դիտէք որ մեր շահերը փայլուն չեն և նմանօրինակ պատեհութիւններն են որ . . .

— Կը հասկնամ ձեր ըսածը, բայց ասիկա բացառիկ պարագայ մ'է. խնդիրը ձեր գեղեցկութեան վեհապետուհոյն հածելի լինելու վրայ է և ձեզմէ կախում ունի որ այժմ իսկ պատիւ ունենաք իրեն ներկայացուելու և նոյն իսկ իրեն օեղանակից լինելու. օ՞ն, մի՛ գեղեւիք, կ'սպասէ մեզ. երթանք երեքսի միասին ճաշելու և ապա խորհրդակցելու. թերեւս ձեր ակնկալութիւնն ևս ի դերն չհանելու մէկ միջոցը կը գտնենք :

Կասկած չունէի որ տեղի պիտի տար. փութացինք նինայի մօտ, որ յոյժ նազելի ընդունելութիւն մ'ըրաւ նորեկին :

Թովանքը կատարեալ եղաւ. բարեկամա ամրովովին յանկուցուած էր :

Կարկանդուական ճաշ մ'ըրինք՝ առատ ըմպելիքով ոռոգելով զայն :

Երբ սուրճերը բերուեցան՝ խորհրդակցութեան ժամանակ համարեցինք և երեքսի միասին խմբագրութեան ձեւին աշխատեցանք :

Տուած խորհուրդիս վրայ՝ համաձայնեցանք որ մեր պատրաստելիք արձագանքը նոյն երեկոյ ուղարկելի քրոնիկին վերջամասը պիտի կազմէր և հետեւեալ օրուան համար մանրամասութիւններ պիտի խոստանար տարտամօրէն :

Հետեւեալ առաւօտ, թերթը համելուն, անմիջապէս օրինակ մը Սթէֆանէսգուի պիտի ուղարկուեր, որմէ յետոյ քրոնիկագիրը պիտի ներկայանար իրեն. շատ հաւանական կը գտնէի որ, շարունակութիւնն արգիլելու համար, այդ մեծահարուստ հասութատէրն ուղէր գոհացնել զինք :

Աւասիկ ինչ որ կը կարդացուէր յաջորդ առաւօտեան Ասկրվերուլի Քէօսթէնձէի թըզ-թակցութեան վերջաբանին մէջ :

«Վերջին պահուն կը տեղեկանամ թէ այս առաւօտ մեծ գայթակղութիւն մը տեղի ունեցեր է քաղաքիս ամենէն նշանաւոր օթեւաններէն միոյն մէջ. սոյն գայթակղութեան ախուր դիւցազնն է Տիար Ա., Պութքչյի համայնածանօթ հասութատէրն և դժբախտ

գոհն է Տիկ. Ն. Թ., մեր պաշտելի վեհապետուհին գեղեցկութեան, ափսո՞ս որ, սուրհանդակին համնելու համար, չեմ կարող տալ մանրամասնութիւնները սոյն ցաւալի տեսարանին, յորում անգամ մը ևս կը հաստատուի թէ լաւ դաստիարակութիւն և բարձր դիրք մեծ երաշխառորութիւն մը չեն միշտ կոշտ ու կոպիտ վարժանց դէմ: Յարգանաց այն անլուր պակասութիւնը, յորում այս առաւօտ Տիար Ա. Ա. գտնուած է հանդէպ համայն Բուժմանիոյ առառուածուհւոյն, նախատանաց անջնջելի դաստակնիք մը պիտի մնայ ցմիշտ իւր ճակտին վրայ:

Վաղը մանրամասնութիւններ՝ եթէ նուրագոյն այժմէկութիւններ արգելք չլինին::

Առոտուն կանուխէն օրինակ մը ուղարկուեցաւ Սթէֆանէսգուի. միջօրէի մօտ մեր համակրելի քրոնիկագիրը Լուսրայի Օրեւանը կը ներկայանար, իւր այցաքարտը կը յղէր և անմիջապէս կ'ընդունուէր իրմէ:

Եւ, այլեւ ինդրոյն վրայ չխօսուելու պայմանաւ. երկու հատ հինգ հարիւր լէյնոց պանդտումն կը չնորհուէր իրեն:

Բարեկամիս ակնկալութիւնն այսպէսով յուսացածէն աւելի գոհունակութիւն կը գտնէր:

Տիկ. Թէտէսգու, որու սրամտութիւնը տակաւ մեղմացած էր արգէն, իւր վրիժառութեան համար այսքանով կը բաւականանար. վերջապէս իւր արտակարգ գեղեց-

կութեան յարակից և անբաժան անպատեհութիւններ էին առնք. մանաւանդ զի ուրախ էր որ քրոնիկագիրն, իւր չնորհիւ, այսպէս օգտուած էր:

Գալով Սթէֆանէսգուի նոյն օրն իսկ կը մեկնէր ոչ միայն Լուսրայի Օրեւանէն, այլ նոյն իսկ Քէօսթէնձէէ:

### Յ.

Եյս երեք սխրավի օրերուն տասն եղեամյին օրեր ևս յաջորդեցին մինչ մեր բաժանումը. կ'արժէր որ այդ օրերէն իւրաքանչիւրն ևս առանձինն իւր նկարագրութիւնն ունենար, այնքան հետաքրքրաշարժ իրադարձութիւններով լի եղան անոնք ալ. բայց առաջադրած ծաւալէս շատ ու շատ անդին անցնիլ հարկ պիտի լինէր:

Չեմ կրնար սակայն դժմադրել պատմելու փափաքիս լնթրիք մը, զոր երեկոյ մը թատրոնէ մեկնելնուս ըրինք Բհարօրան Տրանսի մէջ՝ ընկերացութեամբ այն քրոնիկագրին, որու վրայ խօսուեցաւ նախորդ գլխոյն մէջ:

Գլխաւորապէս ծանրանալու համար այն գրական պայքարին վրայ, զոր նոյն երեկոյ ունեցանք իրեն հետ, աւելորդ է ըսել թէ ամենէն չնորհալից ձևերու ներքեւ:

Տիար Սիլվեան, իւր վիճակին բնրմամբ, բոլոր հանդիսավայրերու մէջ ձրի մուտք

ունէր . այդ երեկոյ զմեղ նշմարելով թառ-  
բնին մէջ՝ մօտեցաւ մեղ և զինք վար դը-  
րինք միասին ընթրելու համար :

Թէև լիուլի վարձատրուած էր՝ բայց  
կ'ուզէինք մեր չնորհակալութեան բաժինն  
ալ այսպէսով իրեն հատուցանել . մանաւանդ  
զի շարունակ հետաքրքրական կամ գուար-  
ճալի իրողութիւններ կ'ունենար պատմելիք  
և երկուքս ալ ծշմարիտ հաճոյքով պիտի  
ունկնդրէինք իրեն :

Հազիւ , ճաշարան հասնելով , սեղանի մը  
շուրջ բալորուած էինք՝ Տիկ . Թէտէսգու ոտ-  
քի ելաւ , անշշուկ մօտեցաւ գդակաւոր զին-  
ուորականի մը , որ թիկունքը մեզ դարձու-  
ցած լինելով մեր մուտքը չէր նշմարած և ,  
միշտ պահուըտելով , ափէզ մը փակցուց  
անոր այտին :

Թայտնի է թէ բումանացի իսլամ զին-  
ուորականք գդակ կը կրեն . արդ անիկա , որու-  
նինա այս կատակը կ'ընէր , երիտասարդ և  
գեղանի իսլամ տեղակալ մ'էր :

Պէտք էր որ միշտ արտասովոր միջադէ-  
պեր տեղի ունենային :

Տեղակալը , զինք տեսնելով , յարգանօք  
կանգնեցաւ և խոնարհագին անոր աջը համ-  
բուրեց :

— Ապտո՛ւ , կ'ըսէր ուրախագին , չափա-  
ղաց գոհ եմ զքեզ տեսնելուս ; ի՞նչպէս ,  
ամէն մասսմբ հանգիստ ես :

Սպասելով բուն բումանացի զինուորա-

կանի մը — Թէտէսգու հարիւրապետին —  
հետ տեսակցութեան՝ իսլամ զինուորականի  
մը հետ տեսակցելու պատեհութիւնը չէի  
ուզեր փախցնել , մանաւանդ զի սոյն չա-  
փազանց մտերմութեան և դուդախօսութեան  
գաղտնիքը գիտնալ կ'ուզէի :

— Տիկի՞ն , գոչեցի կատակալից չեշտով  
մը , հո՛ս հրաւիրեցէք զինք . առածը կ'ըսէ .  
Շինութերն ո՛րքան շատ լինին , զուարձու-  
թիւնն ա՛յնքան շատ կը լինի ։

Եւ Ապտու եկաւ մեղ սեղանակից լի-  
նելու :

Իւր զինուորական ուսումն ըրած էր Թէ-  
տէսգու հարիւրապետին հրամանատարու-  
թեան ներքեւ և այսպէսով էր որ նինա զայն  
շատ լաւ կը ճանչէր և զաւկին պէս կը սի-  
րէր . ստորդ է թէ սոյն վերջինը հազիւ եօթն  
կամ ութ տարի պակաս ունէր իրմէ . գալով  
տեղակալին՝ այն ակնածութեամբ կը վար-  
ուէր , զոր ամէն զինուորական կ'ունենայ  
իւր հրամանատարին կնոջ հանդէս :

Յոյժ բարեկիրթ և յոյժ զարգացեալ որ-  
պէս ամէն բումանացի սպայ , տիրող լեզու-  
էն զատ , սքանչելի կերպիւ կը խօսէր Փը-  
րանսերէն և իւր մայրենի լեզուն :

Պահիկ մը թուրքերէն խօսեցանք իրեն  
հետ . հիացմամբ կը խօսէր հարիւրապետին  
վրայ և չէր գաղցեր կրկնելէ թէ որքա՞ն  
ընտիր անձնաւորութիւն մ'էր . երբ իմացաւ  
թէ զիս ի Պուրէշ հրաւիրած էր՝ չերմովին

ստիպեց որ երթամ տեսնեմ զայն . կարի դոհ  
պիտի մնայի :

Մեր մեկուսի խօսակցութեան միջոցին՝  
իւր մտանութիւնը փորձելու համար՝ ակ-  
նարկելով նիսայի .

— Ի՞նչ շքեղ կին , մրմնջեցի :

— Զքնաղագե՛ղ , պատասխանեց , միայն  
թէ ինձ համար նույրական և սրբազնասուրք :

Պարզապէս հրաշալի էին սոյն բառերը :

Ապոտու , հազիւ կէս ժամ մեղ հետ կե-  
նալէ վերջ , մեկնեցաւ և երեքս մնացինք :

Ա՛ւ կարգն եկաւ : մեր քրոնիկագրին  
վառվուն և զուարթ խօսակցութիւնն ըմ-  
բոշինելու :

— Ե՛թեսէրաման Ռուսինի մէջ ինձ ձօն-  
ուած տողերը կարդացի՞ք , ի՞նչպէս դասք  
զանոնք , հարցուց իրեն միջոց մը Տիկ . թէ-  
տէսդու :

— Սքանչելի՞ . իմ հայրենակիցս ար-  
դարեւ մեր գեղեցկութեան դշխոյին արժա-  
նավայել տողեր նույրած է . եթէ թոյլ տա-  
յիք որ ես ևս պատիւ ունենայի ձեր ալպօ-  
մին վրայ մէկ քանի բառեր զետեղելու . . .

— Մեծաւ հաճութեամբ :

Եւ ալպօնն իրեն ներկայացուեցաւ :

Մեր սեղանակիցը խիստ հակիրճ հատ-  
ուած մը գրեց հոն , որ աւասիկ նոյնութեամբ .

«Je vous aime!» C'est, dans une dé-  
claration d'amour, la formule la plus clas-  
sique, mais toujours la plus éloquente.

«Կը սիրե՛մ զձեղ» . սիրոյ յայտարարու-  
թեան մէջ՝ ասիկա ամենէն դասական բա-  
նաձեւն է , բայց միշտ ամենէն պերճախօսը :

Սոյն խորհրդածութեան մէջ իրաւամբ  
չարաճճի ակնարկութիւն մը նշմարեցի իմ  
գրածներուս . գողցես ըսել ուզէր թէ , փո-  
խանակ ամբողջ էջ մը մրոտելու , եթէ այդ  
երեք բառերը միայն դնէի՛ շատ աւելի պեր-  
ճախօս պիտի լինէին :

Հրաւէրն ընդունեցի :

Նիսայի ալպօմը մեր մրցման ասպարէզը  
պիտի լինէր :

— Սիրելի բարեկամուհիս , յարեցի , կար-  
գըն ի'մս է :

— Յիրաւի՞ :

Իւր հատուածը նոյնութեամբ կրկնեցի ,  
միայն շաղկապի մը տեղ ուրիշ շաղկապ մը  
դնելով և փոքրիկ յաւելում մ'ընելով , ինչ  
որ աւասիկ .

«Je vous aime!» C'est, dans une dé-  
claration d'amour, la formule la plus clas-  
sique et toujours la plus éloquente. Il me  
semble toutefois que sur cet album elle  
serait insuffisante et qu'il faudrait la  
compléter par la formule algébrique sui-  
vante à la Rostand .

+ qu'hier — que demain.

«Կը սիրե՛մ զձեղ» . սիրոյ յայտարա-  
րութեան մէջ ասիկա ամենէն դասական եի

միշտ ամենէն պերճախօս բանաձեւն է. կը  
թուի ինձ սակայն թէ սոյն ալսօմին վրայ  
անբատական պիտի լինէր և թէ զայն լրա-  
ցրնել հարկ պիտի լինէր Ռոսթանեան հե-  
տեւեալ գրահաշուական ձեւով.

+ քան երէկ—քան վազը :

Նինա յափշտակուած էր. իսկ բարե-  
կամս, առանց խէթի, իւր ձեռքն ինձ կ'եր-  
կարէր ըսելով.

— կը խոստովանիմ թէ դուք իմ վար-  
պետս էք :

Ամենէն բարեկիրթ պայմաններու մէջ  
մղուած սոյն պայքարն այսպէս վերջ կը  
գտնէր առանց ուեէ հետք ձգելու, և կը վե-  
րըսկոէինք մեր չէնչող խօսակցութեան :

Չեմ գիտեր ինչպէս մեր բարեկամը զայն  
կը բերէր Նինայի վրայ և տառնեւհինդ տա-  
րիներէ հետէ անոր փառաւորումը կը նըկա-  
րգորէր ինձ :

— Սիրելիս, յարեց միջոց մը, աղէկ  
միտքս ինկաւ. ասկից քանի մը տարիներ  
առաջ լուսկա Աղուստրաբի մէջ, որ մեր Հա-  
շէթի Տարեցոյցն է, Տիկ. Թէտէսգուի լու-  
սանկարը գրուած է ներբողներով և Ռու-  
մանիոյ գեղեցկուրեան վեհապետուհին յորջորջ-  
մամբ. կ'արժէ որ անկից օրինակ մը գնէք  
և պահէք :

— Ո՞ր տարին :

— Հաստատապէս չեմ գիտեր, բայց  
չորս կամ հինգ տարին անցնելու չէ :

— Մեր բարեկամուհին անշուշտ կը յի-  
շէ թէ ո՞ր թուականին, հարցուցի նինայի  
դառնալով :

— Արդեօք պէտք է իրաւունք տակ  
պատասխանեց նէ կատակաւ, այն իմաս-  
տունին որ կ'ըսէ թէ կուգայ վայրկեան մը  
ուր աշխարհի ամենէն մտացի մարդն՝ ամեն-  
էն պանդոյը կը լինի. երեւակայեցէք կին  
մը, որու կենդանազիլն անդամ մը միայն  
հրատարակութեան մը մէջ գետեղուած լինի.  
անիկա ո՞չ միայն տարին, այլ ամիսն ու օրն  
իսկ պիտի յիշէ. բայց լինչպէս կ'ուղէք որ  
ձեր հարցման կարենամ գոհացում տալ ես,  
որու լուսանկարն, այս վերջին երեք հնդամ-  
եակներու միջոցին՝ գրքերու, հանդէմներու  
և թերթերու մէջ անթիւ, անհամար անդամ-  
ներ արտատպուեցան :

— Կատարելապէս իրաւունք ունիք,  
սիրելի՛ս, և քէն չեմ պահեր իմաստունին  
խօսքերուն համար :

Միտքս դրի գրավաճառներուն մօտ փրն-  
տոել. ո՞չ այդ հին տարեցոյցը գտնուեցաւ,  
ո՞չ ալ կրցին ըսել թէ որ տարւոյնն էր որ  
զիս կը շահագրգուէր :

Եւ սակայն իսկապէս կը փափաքէի ու-  
նենալ այդ հատորն՝ որ մէկ քանի լէյ ար-  
ժելու էր և հրատարակչին անունն ու հաս-  
ցէն առնելով՝ որ ի Պուքքէլ էր, ապա Վար-  
նայէ նամակ մ'ուղղեցի իրեն :

Գրավաճառ որպէս եմ կը վախնայի որ

պատեհութիւնը շահագործել ուղէր. ուստի  
առեւրական նամակաթուղթիս վրայ և իրը  
արուեստակից գրեցի իրեն. Եսի թէ ուղե-  
որութեամբ ի Վարնա կը գտնուէի, թէ  
վաճառատունէա յանձնաբարութիւն մը ըս-  
տացած էի մէկ օրինակ Լուսեա Խլուսրաքի  
համար, թէ խնդրանքն ընողը կ'ուղէր հին  
տարիէ մէկ օրինակ, որու գժբաղդաբար  
թուականը չէր յիշեր ճշդովին. միայն տար-  
տամօրէն կը յիշէր թէ այդ տարուան հատո-  
րին մէջ Տիկ. Նինտ թէտէսզուի կենդանա-  
գիրը կը գտնուէր :

Բոլոր իմ հնարամութիւնո՝ որպէս զի  
արտասովոր գին մը չպահանջէ՝ ապարդիւն  
եղաւ. աւասիկ ի՞նչ պատասխան ստացայ:

ԿԿ. ՀԷՐՅ

Գրավանու-սպագրիչ Պուրեց, 28 Յուլիս 1909  
նիմենալ 1884ին

Տիար Մ. Հունկ

և ՎՈՐՈՒ

Ի պատասխանի ամսոյս 22 ի ձեր նամակին՝ կը  
փուրամ ձեզ տեղեկացնել թէ միակ օրինակ մը գտայ  
Լուսեա Խլուսրաքի այն տարուան սպագրութենեն,  
յորում կը գտնուի հարիւապետուի Տիկ. Նինա Թէ-  
տկուի կենդանագիրը:

Հաւասածու յեղծանելու համար՝ ուրիշ ու եւ է  
անձ եկած խնդրանի մը սպառած պիտի պատա-  
խանի, բայց բանի որ արուեստակից մ'ո՛ որ ինձ կը  
գրէ, կը պատասխանեմ թէ ձեզ հանելի լինելու հա-

մար պիտի հաւանիմ երկու հարիւր ֆրանգի փոխա-  
րէն այդ միակ հասորը ձեզ անցընելու, իրաւ և քէ  
միշտ ակամայ:

Սպասելով ձեր պատասխանին՝ պատի ունիմ ձեզ  
ներկայացնելու, պարունակութեամբ արուեստակից,  
իմ սրագին բարեւներու:

ԿԿ. ՀԷՐՅ

Մէկ վարպետորդիին դիմաց՝ մէկուկէս  
վարպետորդի եղած էր:

Կոկօի գեր ստանձնել չէի ուղեր սակայն.  
մանաւանդ զի արդէն նինա իւր շքեղ լու-  
սանկարն ինձ նուիրած էր՝ իւր ձեռագրով  
գեղագրդելով դայն:

Պատասխանեցի ուրեմն թէ պիտի գրէի  
ի Գահիրէ հարցնելու համար թէ խնդրանքն  
ընողն այդ գինը գնել կ'ուղէ՞ր և այսպէսով  
խնդիրն անհետեանք մնաց:

Յուլիս 18., երկուշաբթի օրը հասած էր.  
միջօրէին մեկնող կառախումբին սուլիչը մեր  
բաժանման ժամը պիտի հնչէր. սոյն երկշա-  
բաթեայ մտերմական ընկերակցութեան այն-  
քան սովորած էինք որ երկուքս ալ թախ-  
ծութեամբ համակուած էինք. կը պնդէր  
միշտ որպէս զի Վարնայէ ցամաքի, այսինքն  
Պուրեշի, ճամբով Քէսոթէնձէ վերագառ-  
նայի յԵղիպտոս մեկնումիս համար. այդ  
խոստումը սրամնց կ'ընէի իրեն, մանաւանդ  
զի հետաքրքիր էի իւր ամուսինն ու զա-  
ւակները ճանչելու, իւր ընտանեկան կենցաղն  
ևս ուսումնասիրելու և ի մասնաւորի տես-  
նելու թէ մայրաքաղաքին մէջ ևս իւր երես-

ւումն որպիսի՛ խամսդավառութիւն յառաջ կը բերէր :

— Իմ բարեյաջող ասաղս, կը հաւաստէի իրեն, որ զիս արժանացուց քու թանկագին բարեկամութեանդ, անտարակոյս զիս արժանի սլիտի ընէ նաև քու ընտանեկան երջանիկ յարկդ այցելելու :

— Ես ևս օրհնելու եմ, յարեց, իմ բարեյաջող ասաղս, երբէք խորհեցա՞ր ինքնին, սիրելի՛ս, թէ Բնչ էր շարժառիթն որով, չնչին պատրուակի մը ներքեւ, քու ընկերակցութիւնդ վիճակեցի :

Ասիկա ծշդովին այն առեղծուածն էր, որու բանալին վիճառել մոռցած էի նոյն իսկ, զի մեր մտերմութիւնն այնքան բնական հանգամանք մը ստացած էր :

— Երանութիւնն այնքա՞ն կ'ողովէր զիս, պատասխանեցի, որ միջոց չունեցայ ատոր մտածելու :

— Եթէ քու ընկերակցութիւնդ չունենայի՝ ո՛ գիտէ քանի քանի դարպասողներ զիս պիտի շրջապատէին ու ձանձրացնէին. Լօլիրայի Օթեւանին դէսքին նման անհաճայ պատահարներ յաճախ պիտի կրկնուէին. ո՛չ միայն անոնցմէ աղատեցիր զիս, այլ եւ երանաւէտ և անմոռանալի օրեր պարգեւեցիր ինձ. ըստ բախտի ընտրութեան մը մէջ բարեյաջող ասաղս ասկից աւելի ձեռնուուէր կրնար լինել ինձ :

Փա՛ռք Տիրո՞յ, երկրորդ առեղծուածն ևս լուծուած էր :

Մինչ ի Պուքրէշ ժամանումս յաճախակի թղթակցիլ կը խոստանացինք իրարու և ա՛լ վերջին վայրկենին՝ երբ վայրաշարժը կ'սկսէր շարժիլ, նոր և գերագոյն փաստ մը գտաւ զիս համոզելու համար որ անպատճառ իրենց այցելեմ:

— Հարիւրապետին թոյլտուութեամբ, գոչեց, զգեստ ընդունելու համար ըումանական ամենաճօխ տարազս պիտի հագնիմ. պիտի տեսնես թէ այդ արդուզարդիս մէջ որքա՞ն տւելի հիանալի կը լինիմ:

— Անկասկած եղի՛ր, սիրելի՛ս, բարի ուղեւորութիւն :

Եւ աւասիկ կը հեռանար անիկա՝ որ երկու շաբաթ անընդհատ իւր հմայից ներքիւ պահած էր զիս. թաշկինակի և գլխարկի տատանումներ մէկ երկու երկվայրկեան և ամէն ինչ կ'աւարտէր :

Կարծես ինձ բախտակից լինելու համար՝ երկինքն ևս յանկարծ կ'ամպուտէր և անձրեւել կ'սկսէր :

Ա՛լ կարելի չէր ինձ օր մը իսկ մնալ Քէօսթէնձէ. բարերախտաբար տոմսակս առած էի և նոյն գիշերն իսկ շոգենաւ առի Վալնա մելինելու համար :

• • • • •  
Ընթերցողներս չպիտի ուզեն հաւատալ թէ սոյն իրական պատմութիւնն այսպէս կը վերջանայ. լոկ ձշմարտութիւնն այդ է սուկայն. ոչ իսկ կրցի երկրորդ անգամ տեսնել

զինք, զի վաճառատունէս հասած կարեւոր և ստիպողական տեղեկութեանց վրայ՝ անհրաժեշտ գործի մը կարգադրութեան համար Վարնայէ անմիջապէս և ուղղակի ֆրանսա ուղեւորիլ պարտաւորեցայ:

Պիտի ըսէք ինձ թէ անկից ի վեր կարելի էր ինձ՝ կրկին զինք տեսնելու պատեհութիւնը գտնել. անկեղծօրէն կը խոստովանիմ թէ այդ պատեհութիւնը չփնտոեցի բնաւ. կը հարցնեմ ձեզ թէ յիսունը թեւակոխած անձ մը կրնա՞յ վստահ լինել որ իւր հմայքը պիտի պահէ միշտ՝ մանաւանդ Տիկ. Թէտէսդուի նման ամէն կողմէ շողոմեալ կնոջ մը վրայ. անկում մը անագորոյն պիտի լինէր, ուստի խոյս տուի անկից:

Սակայն ստէպ կը թղթակցինք իրեն հետ և իւր գողտրիկ ու անուշաբոյր նամակները կուգան երանաւէտ յիշատակը վերարծարծելու այն անզուգական օրերուն, զորս իւր մօտ անցուցի, և նոր սփոփանք ու կազդուրանք ներարկելու ինձ:

Վ Ե Ր Զ



Morawitzky

come my

John

John

John

John

